վասարակշռություն է սրեղծում հուզական պոռթկումի և հոգեկան հանդարտության միջև: Այս երաժշտական հնարք համապատասխանում է քնարական տիրությունը: Բանաստեղծության հերոսը տիրու է, միևնույն ժամանակ նրա հոգում բերկրանքի զգացում է, որը վեհ է իր բնույթով, քանի որ անպատասխան է: Հերոսը սիրո պատասխան չի պահանջում, նա հարույկ վերաբերմունք ունի սիրելի կնոջ նկատմամբ, և այդ ձևով երևում է սիրո հոգևոր, ինքնաբավարար և երախտապարտ բարձրագույն ձևը: Իսկ ինչպե՞ս է այդ առանցքային ինտրոնացիան դրսևորվում նվագակցության մեջ:

Տոնայնությունը՝ **b-moll**-ը, դրսևորում է եվրոպական երաժշտության ավանդույթները: Իսկ իրականում ամբողջ հարվածում արտերացիոն փոփոխությունների են ենթարկվում (բարձրացվում են) չորրորդ և յոթերորդ աստիճանները: Այդ արտերացիաների հերևանքով ի հայտ է գալիս երկու մեծացրած սեկունդաներով լադը:

Օրինակ 3 ա)

ՏԵՐՏԻՆ ԿՈՒՏԱՍ

բ)

Բերված ա) օրինակում նշված են պասսժներում ու սկորդներում ցրված փոքր և մեծացրած սեկունդայի ինտրոնացիաները և դրանց շրջվածքները, ինչը ցույց է տալիս այդ մոտիվային միավորների ներթափանցումը սրեղծագործության բոլոր շերտերի մեջ՝ որպես առանցքային տարրեր: Առանցնահարույկ նշենք այն, որ զարդանախշված ֆակտուրայի մեջ տեղավորված երկու ինտրոնացիոն մոդուսները (**f-e-des-c** և **a-ges-f**) միմյանց լրացնում են (2. էջ 142): Առաջինը մեղեղու հիմքն է, իսկ երկրորդը՝ նվագակցության (մենք նույնացնում ենք փոքր և

մեծացրած սեկունդաները և դրանց շրջվածքները, քանի որ շարժուն պարկերներում դրանց գործառույթն ակնհայտ է):

Այսպիսով, կարող ենք միանշանակ հաստատել, որ գոնե առաջին երաժշտական ֆրագում գործունենք երաժշտական շարադրանքի տարրերի ֆունկցիոնալության հարույկ ձևի հետ: Պայմանականորեն այդ ֆունկցիոնալությունը անվանենք մոդուսային, քանի որ թե՛ մեղեղում, թե՛ նվագակցության մեջ կիրառվել է երկու միանման մոդուս, որոնք միմյանցից տարբերվում են լադային կառուցվածքի մեջ իրենց ունեցած դիրքով: Դա հիշեցնում է լադային հարմոնիայի հարկանիշները, որը տվյալ դեպքում միանշանակ դարձել է երաժշտական ընթացքի կազմակերպման սկզբունք:

Դիտարկենք ևս մեկ էպիզոդ՝ համոզվելու համար, որ մեր դուրս բերած սկզբունքը համընդհանուր է:

Օրինակ 4

Այստեղ առկա են լադային փոփոխության հարկանիշները: Առաջին տակտում մոդուսի դիրքն ըստ բարձրության փոփոխված է (**d-cis-b**), իսկ երկրորդ տակտում հարույկ ընկալելի է վերընթաց լոկրիական պենտատոնորդը, որը դրսևորվում է մեղեղու և սկորդի փոխհարաբերության մեջ:

Օրինակ 5

Ռոմանսի վերջին բաժնում այդ ինտրոնացիոն երևույթը էլ ավելի տեսանելի է դառնում:

Օրինակ 6

Համեմատական վերլուծություն



Մեղեդիում նույնպես այս մոդուլը փեղաշարժված է: Այժմ այն հնչում է որպես «as-b-des» (վերևի փող): Դաշնամուրային ֆակտուրայում նույնպես դա նկատելի է, իսկ վերջին պասաժներում սկզբնական մոդուլի ձևափոխությունը հանգեցրել է ասփնանների փոփոխմանը՝ գերօկտավայնության սահմաններում (օրինակում դա սիսեմարիկ ձևով ցույց է տրված):

Միանգամայն ակնհայտ է, որ լադային հարմունիայի հնարները մեղեդու զարգացման լայր ինտրոնացիոն ձևի հետ համակցմամբ կիրառելով, Ռ.Մեյիլքյանը կերպարային արտահայտչականություն է ստացել: Ակորդային միավորների դիստանսն հնչողությունը փոխընդմիջվում է սոնորիապական պասաժների հետ, և դա ծառայում է կերպարի երկակի ընկալմանը: Մի կողմից հուսալքությունն է, որն արտահայտվում է նվագակցության մեջ դիստանսն հնչողության արման մեջ, մյուս կողմից՝ մեղեդու արտահայտչականությունը, որի ամբողջ ընթացքում անցկացվող, ըստ դիրքի փոփոխվող և փարբերակվող մոդուլը միշտ ճանաչելի է: Դրան նպաստում են նաև գրեթե իմպրեսիոնիստական պասաժները և ռոմանտիզմի դարաշրջանում ծնունդ առած ակորդային ուղղահայացների վառ փերցիային համադրումները, որոնք մի կողմից հարմունիկ բարեհնչության, մյուս կողմից՝ դիստանսների անլուծելիության փայլունություն են ստեղծում: Դիստանսների այդ անլուծելիության հնարն ունկնդիրն ընկալում է, որպես անհասանելի նպատակի զգացողություն, իսկ փերցարի բովանդակության հետ համակցմամբ՝ դա փոխադարձ զգացմունքի սուր վերասարտումներով լի անհասանելիություն է, որը նաև ազնիվ է:

Արմեն Տիգրանյանի «Ան աչեր» ռոմանսը: Եթե Ռ.Մեյիլքյանի վերը քննարկված ռոմանսը հասցեագրված էր կանանց, և պերք է կարարի քնարադրամատրիկական տեղորոշ, ինչը բխում է բանաստեղծության փերցարից, ապա Ա.Բասիակյանի «Ան աչեր» բանաստեղծությունը և նրա երաժշտական մարմնավորումն ուղղված են փղամարդուն և ավելի շուր նախաստեղծված է մեցո-սուպրանոյի համար (5. էջ 87):

Բանաստեղծության մեջ դրսևորվում է քնարական փերցիայում հազվադեպ հանդիպող բովանդակություն: Սա բանաստեղծությունն է՝ նախազգուշացում է՝ քնարական փերցության երանգով: Ընդ որում օժտված է այն նույն բնույթով, որը դիրքակեցիքը նախորդ ռոմանսում: Կրկին արտահայտվում է անպարասիան սիրո հետևանք հանդիսացող փերցությունը: Հեղաբրքական է հենց այդ փաստը: Ըստ էության, այս երկու բանաստեղծությունն ու դրանց երաժշտական մարմնավորումը միասեռ են՝ իմաստային բովանդակության տեսանկ-

յունից, սակայն մրաժողության փարբեր՝ արական և իգական հոգեբանական մոդելներ են ներկայացնում: Պոեզիայի այս նմուշների հոգեբանական աստիճանները համադրության մեջ դրսևորում են անհատի փառապանքի հոգեբանության փարբերությունները՝ կապված անպարասիան սիրո հետ: Այ. Բասիակյանի «Շափաղ կուրաս» բանաստեղծության մեջ և նրա վրա հիմնվող ռոմանսում արտահայտվում է փառապող փղամարդու խորը փերցությունը, սակայն նրա զգացմունքը պայծառ է և քերշորեն պահպանվում է գիտակցության հոգևոր հիշողության մեջ: «Ան աչեր» բանաստեղծության մեջ նույնպես արտահայտվում է խորը փերցությունը, սակայն դա ինքնահրաժարման պատիվ դիրքորոշում չէ, այլ ընդհակառակը, զգուշավորություն: Միքեցյալին ուղղված խոսքերը ենթադրում են նրա հետ ուղղակի առնչություն, վերջինիս սիրո աղբյուրից եր պահելու փորձ, և անգամ այդ զգացմունքի պարմառ է առաջադրվում չարքերի ազդեցությունը:

Բանաստեղծական այս երկու սկզբնաղբյուրների համադրման մեջ հարակ դրսևորվում է փղամարդու և կնոջ հոգեբանության բնույթը: Տղամարդիկ, որպես կանոն, նման իրավիճակներում պատիվ ողջամտություն ունեն և պարբաստ են ինքնահրաժարման, իսկ կանայք, ընդհակառակը, զգացմունքի ուժի ազդեցությամբ պարբաստ են ամեն ինչի՝ հանուն սիրո: Տվյալ դեպքում զգուշացման մեջ պարունակվում է անհեթեթ փաստարկում, որ չարքերն են մեղավոր սիսալ (կնոջ տեսանկյունից) ընտրության մեջ:

Ան աչերեն շատ վախեցի՛ր,-

Էն մութ, անձեր գիշեր է.

Մութն ա՛հ է, չարքեր շատ կան,-

Ան աչերը մի՛ սիրե:

Տե՛ս իմ սիրտը – արուն-ծով է.

Էս չարքերը զարկեցին.

Էն օրվանեն դադար չունիմ,-

Ան աչերը մի՛ սիրե...

Հոկտեմբերի 25. 1897թ.

Ալեքսանդրապոլ (3. էջ 77 և 397):

Իհարկե, մեր եզրահանգումներն ընդհանուր օրենք չեն ենթադրում: Դրանք վերաբերում են միայն փյալ երկու բանաստեղծության բովանդակության համադրմանը, որոնք այնուամենայնիվ, որոշ չափով կարող են վերաբերել որոշակի հոգեբանություն ունեցող փղամարդուն և կնոջը: Տվյալ դեպքում բանաստեղծական փերցարի երևում բաքնված են որոշակի անչնավորություններ: Չէ՞ որ բանաստեղծը, իսկ մեր դեպքում նաև բանաստեղծ – փիլիսոփան, միշտ գնում է աշխարհը և որոշակի մարդկանց, ավելի սուրյո՞՝ նրանց պահվածքը բանաստեղծի համար կերպարին խորհրդանշող սկզբնաղբյուր է ծառայում:

Այսպիսով, դիմենք Ա.Բասիակյանի «Ան աչեր» բանաստեղծության երաժշտական փարբերակին, որի հեղինակն է Արմեն Տիգրանյանը, և որոշ համեմատական զուգահեռներ անցկացնենք մեր քննարկած Ռ.Մեյիլքյանի ռոմանսի հետ:

Ըստ երաժշտական – ժանրային հարկանիչների՝ սա նույնպես ռոմանս է: Ի փարբերություն Ռ.Մելիքյանի ռոմանսի, այստեղ դրսևորվում են ուրբանիստական երաժշտության որոշ հարկանիչներ: Մեղեդային պարզությունը, ամբողջ ընթացքում անփոփոխ շարունակվող 6/8 մետրական հիմքը և երգային ինտոնացիոն որոշ հարկանիչները ստեղծագործությանը սայլոնային նվագածության գծեր են հաղորդում: Ռ.Մելիքյանի ռոմանսի համեմատությամբ՝ սա բանաստեղծության գաղափարի արտահայտման գեղագիտորեն ավելի պարզ փարպետասկ է միաժամանակ ավելի մարչելի է ունկնդիրների լայն շրջանների համար: Հնարավոր է, որ այդպիսի գեղագիտական րեսակը կապված է բովանդակության որոշակի մեկնաբանության հետ: Սայլոնային երաժշտության մեջ դրսևորվում է հասարակության որոշակի դասի մրածելակերպը, և այս իմաստով բանաստեղծությունների մեջ գայթակղության պարունառ հանդիսացող շարքերի մասին հիշեցումը ներկայանում է որպես կենցաղային առեղծվածի դրսևորում, որը հասարակության այդ շերտի գիտակցության որակ է հանդիսանում: Մթությունը, վախը, շարքերը՝ գոուչացումների առանցքային բառեր են, սակայն դրան գուգահեռ առկա է նաև սիրո գաղտնի խտարովանություն, ինչից և բխում է սիրեցյալի ճակարագրի համար րագնապը:

Ծավալուն նախաբանը, որը ռոմանսի միջին մասում դառնում է դաշնամուրային նվագի հիմքը, լիովին համապարասխանում է քաղաքային ռոմանսի գեղագիտությանը:

Օրինակ 7



Սայլոնային բնույթն զգացվում է նաև սեկվենցիոն մոտիվի իմպրացիայի պարզ ձևի մեջ, որը ոչ մի կերպ կապված չէ ռոմանսի մեղեդային – ինտոնացիոն ոլորտի հետ: Սակայն մեղեդու կառուցվածքում առկա է ինտոնացիաների վառ արտահայտիչ խաղը: Ռոմանսի բավական կուռ կազմակերպմամբ օժտված մեղեդին կառուցված է իրար նման, վարիացիաների ենթարկվող երկու մոտիվներից, որոնք ամբողջ երգաբաժնին ներդաշնակություն են հաղորդում: Դեռևս առաջին չորս րակիրում ներկայացվում են այդ սկզբնական մոտիվային կորիզները:

Օրինակ 8 օրինակը պատրաստվում է



Երկու իրար նման վերընթաց մոտիվային կորիզները (օրինակում նշված է քառակուսի շրջանակով) շրջանակում են ֆորշլագ պարունակող նրբագեղ մոտիվը, որը չորրորդ րակիրում փոխադրվում է ավելի բարդ պարկերի մեջ (նշված է կլոր շրջանակով): Ռոմանսի մեղեդու հիմքում կա այս երկու մոտիվը:

Օրինակ 9



Ռոմանսի առաջին բաժնում հարակ պահպանված է երկու մոդուսների հացորդականության սկզբունքը, որը երկու անգամ վերարրադրվում է որպես դաշնամուրային նվագաբաժնի իմպրացիա: Երկրորդ բաժնը պահպանում է ռոմանսի մեղեդու գրաֆիկան և դաշնամուրային նվագակցությունը, ինչպես դա ցույց է րրված օրինակներում: Այսպիսով, րվյալ դեպքում կարելի է անկասկած րասարկել ամբողջ երաժշտական նյութի լայր ինտոնացիոն կառուցվածքի հնարի առկայությունը, ինչը նման է Ռ.Մելիքյանի ռոմանսի երաժշտական հյուսվածքի նմանարիպ սկզբունքին: Հերարքբրական է, որ ծայրահեղորեն րարբեր երաժշտական ոճերի պայմաններում, երկու ռոմանսն էլ օժտված են երաժշտական ընթացքի կազմակերպման միևնույն լայր ինտոնացիոն սկզբունքով:

Իսկ եթե այս երևույթը դիտարկենք բանաստեղծական րեքսրի առնչությամբ, ապա կարող

Համեմատական վերլուծություն

ենք ենթադրել, որ այս կառուցվածքային սկզբունքի նախադրյալները գոյություն ունեն բանաստեղծական տեքստի կառուցվածքային առանձնահատկությունների՝ նրա ֆունկցիոնալ ռիթմիկ և տոնալ ընդհանրացումները:

ԱՏիգրանյանի ռոմանտի լադախարմոնիկ մրաօժողությունը պարզ է և դիաֆոնիկ, և ի տարբերություն Ռ. Մելիքյանի ռոմանտի, հիմնվում է պարզ ֆունկցիոնալ հարմոնիայի վրա: Դրա հետ միասին, այստեղ կան նաև ինքնատիպ հարմոնիկ համադրություններ: Օրինակ, նախանվագում (տես օրինակ՝ երրորդ տեսակում), հիմնական տոնայնության՝ *d-moll*-ի հարմոնիկ դոմինանտն է հնչում, որը տոնիկայի մեջ լուծվում է ոչ թե ավանդական սկզբունքով, այլ «միջնորդ» սուբդոմինանտային միջոցով: Ութերորդ տեսակում՝ մեղեդու սկզբից առաջ, կադանսը ներկայացված է մաժոր սուբդոմինանտայով, որին էլ նախորդել էր բնական դոմինանտն: Այս օրինակները վկայում են մոդալ հարմոնիայի հնարների ինքնատիպ կիրառության մասին, որտեղ ինքնատիպությունը դրսևորվում է սուբդոմինանտայի և դոմինանտայի ավերացիոն ձևափոխումների մեջ:

Դրա հետ միասին, առկա են տոնիկա – դոմինանտային չզոդակալության բացահայտ դրսևորումներ՝ եզրատիպիչ և որոշ միջանկյալ կադանսներում: Սակայն հարմոնիայում ամենից արտահայտիչ դրսևորումները մեր արդեն ներկայացրած հնարներն են, ըստ որոնց, հարմոնիկ դոմինանտան տոնիկայի մեջ է լուծվում սուբդոմինանտային միջոցով, և համադրվում են բնական ու հարմոնիկ յոթերորդ աստիճանները: Երկու հնարներն էլ բազմիցս կիրառվում են:

Օրինակ 10



Եթե գնահատենք հարմոնիկ լեզվի այդ առանձնահատկությունները, հաշվի առնելով ազգային երաժշտական ինտոնացիոն կերպարների բնույթը, ապա կարելի է փորձել դասակարգել այն ոչ այնքան որպես մոդալ հարմոնիա, որքան որպես ինքնատիպ ֆունկցիոնալություն, որը կապված է հայ ավանդական երաժշտության մեջ գոյություն ունեցող չզոդակալության բնույթի հետ: Դա կարելի է հաստատել նրանով, որ մոդալ հարմոնիայում հարևան հարմոնիաների չզոդակալությունը թույլ է արտահայտվում և կախված է երաժշտական ընթացքն առաջնորդող մեղեդու գրաֆիկայից: Տվյալ դեպքում թե՛ մեղեդիում, թե՛ հարմոնիայում չզոդակալությունը ուժեղ է հենց հարմոնիկ կապերի մեջ, որոնք իրենց հերթին ուղղակիորեն կախված են մե-

ղեդու լադային չզոդակալությունների արտահայտչականությունից:

Երաժշտական արտահայտչամիջոցները հարմարեցված են բանաստեղծության բովանդակության հետ: Հարմոնիկ շերտի մեր նկարագրած համակարգը ռոմանտի ֆունկցիոնալության և կոնպոզիցիոն կառուցվածքում անընդմեջ լարվածության զգացողություն է առաջացնում, որը փոփոխվում է՝ հարմոնիայի փոփոխություններից ելնելով, սակայն երբեք չի լուծվում տոնիկական կայունության մեջ: Ռոմանտում ներկայացված հարմոնիկ հաջորդականությունների մոտեցման մեջ անգամ տոնիկական «հանգստությունը» չի բերում լիարժեք երաժշտական հանգստություն, այլ լարվածությունը պահպանվում է նաև եզրատիպիչ կադանսում: Կոնպոզիտորը բանաստեղծական տեքստի բովանդակության արտահայտման համար ճշգրտորեն է ընտրել երաժշտական միջոցը: Տազնապր բանաստեղծության գլխավոր վիճակն է և հաղորդվում է չլուծվող հարմոնիաների համակարգի միջոցով, որի վրա շերտավորվում են ինտոնացիոն միանման, բայց վարիացիաների ենթարկվող մոտիվների բազմակի կրկնությունները:

Այդպես է տազնապր արտահայտվում նաև մարդկային մրաօժողության մեջ: Միևնույն կերպարը գիտակցության մեջ անընդմեջ ձևափոխությունների է ենթարկվում, ինչն էլ հոգու մեջ անընդմեջ տազնապր զգացողություն է առաջացնում:

Վերը քննարկված երկու կերպարային առումով հակադիր ստեղծագործություններն, ըստ էության, միմյանց լրացնում են: Իհարկե, եթե դա համարենք ուղղակի համընկնում է, ապա գործ ունենք պարահասկանությունների հետ: Այսինքն, միմյանցից անկախ, երկու կոնպոզիտոր ստեղծել են գեղարվեստական դիպրի: Հակադիր բովանդակությամբ երկու ռոմանս զարմանալիորեն բացահայտել են տղամարդու ու կնոջ հոգեբանական վիճակի նոր սահմանները, նրանց արչագանձը կյանքում հաճախ հանդիպող միևնույն դրամատիկական իրավիճակի նկատմամբ:

Չարմանալին այն է, որ այս երկու ստեղծագործությունն էլ հիմնվում են միևնույն բանաստեղծի՝ Ա.Բասահյանի տեքստի վրա: Այս փաստից պարադոքս եզրակացություն է հետևում: Արդյո՞ք սա չի հաստատում փիլիսոփայական այն գաղափարը, որ պարահասկանություն չի լինում: Գոնե այդպես է արվեստում:

Հարո Լևոնի Սյունյանյանի ռոմանսները Ա.Բասահյանի տեքստերով: Ավագ սերնդի կոնպոզիտոր Հ.Սյունյանյանի ժառանգության մեջ Ա.Բասահյանի տեքստերով գրված չորս ռոմանս է հայտնի (6. էջ 82-86): Մենք կդիտարկենք դրանք, քանի որ այդպիսով կբացահայտվի բանաստեղծի կերպարային «գունապնակի» որոշակի կրկնվածքը: Այսպես, բոլոր տեքստերը նվիրված են Հայաստանի բնության գովերգմանը: Բոլոր ռոմանսների դիտարկման համար խթանիչ հանգամանք է դարձել ոչ միայն այդ արարքին պարճառը, թեև այլ դեպքերում առաջնորդվել ենք ընտրության ճանապարհ-

հով: Բանն այն է, որ Հարո Սյրեփանյանի՝ Ա.Բասահայանի տեքստերով գրած բոլոր ռոմանսները, կարելի է միավորել մեկ շարքի մեջ՝ ըստ կերպարային իմաստարային փոխյրացնող հարկանիշների: Յուրաքանչյուր ռոմանս նվիրված է Հայաստանին բնորոշ բնության մի որոշակի երևույթի: «Էյ, Մանթալ» բանաստեղծությունը նվիրված է հովիտին, անուշահոտությանը: Մանկության հիշողություններն այժմ վերադառնում են երազի մեջ: «Առաջին երգ» պոեմից հարվածը Արագած լեռան հիացական նկարագրություն է և Մանթալի հովիտի հետ համակցությամբ ներկայանում է որպես Հայրենիքի հրաշագեղ պատկեր: Այս պատկերը լրացնում է աշնանային սառը քամու բանաստեղծական նկարագրությունը: Իրանով նկարագրվում է ն՝ բնության երևույթը, և՛ բանաստեղծի հոգեվիճակը, որի փորձությունը այլաբանորեն արտահայտվում է այդ բանաստեղծության կերպարային միջոցով: Վերջապես, «Հայրենի աղբյուր» բանաստեղծության երկու տներում բանաստեղծական հմայքով գովերգվում է աղբյուրը, մեկը այն բազմաթիվ աղբյուրներից, որոնցով լի է Հայաստանը: Այն խորհրդանշական կերպով, փոխաբերական իմաստով նույնացվում է ոգեշնչման աղբյուրի հետ: Ստեղծագործական պոռթկումի այդպիսի աղբյուր կարող են լինել նախորդ երեք բանաստեղծությունները միասնաբար:

Այդպիսի հերթականությամբ էլ կդիրարկենք Հարո Սյրեփանյանի՝ Ա.Բասահայանի տեքստերով գրված չորս ռոմանսները:

«Էյ, Մանթալ» ռոմանսը: Մանթալի հովիտի գեղեցկությունը բանաստեղծին են վերադարձել մանկությունից՝ երազի տեսքով: Սա անամպ երջանկության կերպարային արտահայտությունն է, այն երջանկության, որը միայն երեխան կարող է ունենալ, քանի որ նրա գիտակցությունը կյանքի ճանաչողությամբ դեռ չի լցվել: Սա, ըստ էության, Աշխարհ գալու փոռի նկարագրությունն է, մի զգացողություն, որը ոչ մի բանի հետ համեմատելի չէ և, ավաղ, տարիքի հետ կորում է:

Էյ Մանթալի երազ հովիտ,
Դուն, զմրուխտն օրորոց,
Ծաղիկներդ լուսափթիթ
Վրաս մետաքսե վառ ծածկոց:
Աղբյուրներդ բյուրեղ կարկաչ,
Հովերդ անուրջ կրբերեն,
Մոռացումի թովիչ երգեր,
Հովերդ անուշ կօրորեն:

Հուր հավքերդ թներն արծաթ,
Կտուցներդ լալ մարջան,
Ինձ կը պատմեն ոսկի հեքիաթ
Աշխարհներեն դյութական:
Էյ Մանթալի երազ հովիտ,
Դուն, զմրուխտն օրորոց,
Ծաղիկներդ լուսափթիթ
Վրաս մետաքսե վառ ծածկոց:

Իսկ ինչպիսի՞ արտահայտչամիջոցների է դիմել Հարո Սյրեփանյանն այդպիսի կերպարայինությունն արտացոլելու համար:

Ամենավառ միջոցը կոմպոզիտորի ընդրած ժանրն է: Այս ռոմանսը գրված է օրորոցային երգի

ժանրում, ընդ որում՝ հայկական բնորոշ օրորոցային: Որպես ռիթմական բարախումների բանաչև, 6/8 մետրն է ընկած ամբողջ մեղեդու հիմքում: Կիրառվում է սինկոպայի հնարը: Սա ներպակարային սինկոպան է, որը բնորոշ է հայկական օրորոցայիններին: Սակայն բացի ռիթմական կազմակերպման այս միջոցից, կոմպոզիտորը կիրառել է մի շարք զուր երաժշտական հնարներ, որոնք առնչվում են օրորոցային կերպարայինությանը: Այսպես, մեղեդու արտահայտչականությունն սրեղծում են ճկուն, սահուն դարձվածքները, որոնք քաղված են ֆոլկլորից, իսկ հարմոնիկ բարեհնչությունը պայծառ կերպարայինության ընդհանուր փրամադրություն է սրեղծում, այնպիսին, որում դրսևորվում է օրորոց երգողի մայրական քնքշությունը:

Ռիթմական բարախման կրկնությունը նպաստում է օրորելու կերպարայինության դրսևորմանը: Այդպես են օրորում ընդ մանկանը: Իսկ ռոմանսի նախաբանում, որը ռեպրիզից առաջ գործիքային նվագի է վերածվում, որոշակի կրկնվող ռիթմ է առաջադրվում, որը ամբողջ շարժմանը ռիթմական շարժունության ինտերցիա է հաղորդում: Հեղաբրքի է, որ ռոմանսի գործիքային հարվածների հիմքում այլ ռիթմական պատկեր է ընկած՝ առանց սինկոպայի:

Օրինակ 11

ԷՅ ՄԱՆԹԱԼԻ ԵՐԱԶ ՀՈՎԻՏ

Խաչատուր ԿՐԻՍՏՅԱՆ



Թե՛ գործիքային հարվածների, թե՛ երգային էպիգոդների «օրորող» խաչկուրան իրականացված է շնորհիվ ռիթմական կրկնողությունների հնարների, իսկ գործիքային և վոկալ հարվածների միջև ռիթմական չհամընկնումները, շնորհիվ ռիթմի կազմակերպման սկզբունքային տարբերություններին, մեղմ հակադրություն են սրեղծում, ինչը նպաստում է սրեղծագործության գաղափարի ավելի արտահայտիչ իրականացմանը:

Մեղեդին ճկուն է, իսկ դաշնամուրային նվագակցությունը միջին բաժնում հագեցած է զարդանախշային կոնյուրասյունկարային զարգացումով:

Հեղաբրքի է երկու հիմնական ռիթմական բանաչևների շերտավորումը, որտեղ մեղեդին շարադրվում է սինկոպայով, դաշնամուրային նվագն՝

Համեմատական վերլուծություն

առանց նրա (օրինակում նշված է):

Օրինակ 12

Լադային կազմակերպումը նույնպես ինքնաբերական է: Տոնայնությունը «h-moll» է՝ երկու փրոտիված աստիճաններով: Մեկը երրորդ աստիճանի փրոտիվումն է, ինչը մատնանշում է միևնույն-մատնային համապատասխանումը, մյուսը՝ չորրորդ, որն ընդգծում է չգողականությունը դեպի դոմինանտան: Մակայն երկու դեպքում էլ փրոտիվները երգաբաժնի մեղեդային զարգացման մեջ հեղադարձ իրոնապրիկայի բնույթ է կրում:

Օրինակ 13

ա)

բ)

Առաջին երկու բաժիններում տեսաբար շարադրվում է չիրկնվող մեղեդու մեջ, իսկ չեին ռեպրիզանություն է հաղորդում առաջին բաժնի կրկնությունը՝ առաջին փրոտիվի կրկնության հետ:

«Հե՛յ, Արագած» ռոմանսը: Ա.Իսահակյանի բանաստեղծության մեջ գովերգվող, հայ ազգի սրբություններից Արագած սարին նվիրված փյույվ բանաստեղծության հիմքում «Առաջին երգ» պոեմի առաջին երկու փրոտիվներն են:

Բանաստեղծի հիացմունքը՝ լի Արագած սարի նկարմամբ սիրով, որպես հայրենիքի խորհրդանշաններից մեկը, փոխաբերական համեմատության

ձևով է արտահայտվում: Սրբորոպից միևնույն գագաթ չգվող սարը հոգուց է «վեր չգվում», իսկ նրա լանջերին ասորող թռչունների երգը բանաստեղծական ոգեղնման աղբյուր է դառնում:

Օրինակ 14

Հե՛յ, Արագած, ալ-լալ հագել
 Ո՞ր կրթունիս իմ երգիս պես.
 Սրտիս խորքեն ելել-կանգնել
 Երկինք կերթաս իմ սիրուս պես:
 Բո լալագար, ծիծաղուն ծաղկունք
 Իմ վարդ-սերեն բույր կառնին.
 Չառ Մանթաշի թև ու թռչունք
 Իմ բլրուլեն ձեն կառնին,
 Հեյ ջա՛ն, հա ջա՛ն, - ցողն ու ակունք
 Սրտիս խորքեն ծին կառնին:

Հարո Սրեպիանյանի ռոմանսի կոմպոզիցիոն կառուցվածքը նման է բանաստեղծական կերպարին: Հարակ հաշվարկված է ռոմանսի սկզբից (հակիրճ և մեղմ) միևնույն վառ կուլմինացիան ուսկե հարման կերպն ընկած փարածքի (32-րդ փակի) միջև համաչափությունը (երկու ֆորմերով հնչող պատած):

Օրինակ 14 ա)

ՀԵ՛Յ ԱՐԱԳԱԾ

Tempo rubato Alla religiosa

բ)

Դինամիկայում, հնչյունի բարձրությունների հարաբերակցություններում, կոմպոզիցիայի առանձին փրոտիվներում վերարտադրվել է Արագած սարի վեհությունը: Երաժշտական նյութի մեջ ամբողջովին պահպանվել է գաղափարի հակիրճ շարադրման սկզբունքը: Մեղեդիում կիրառվել է վանկերգային շարադրանքը: Յուրաքանչյուր վանկն մեկ նուրայով երգելու սկզբունքը մեղեդուն էպիկական պատումի բնույթ է հաղորդում: Նվագակցության միջոցները

Երաժշտական հասցե՝ 3(38)/2010

ռացիոնալ են կիրառված: Կարճ մոտիվները շերտավորվում են չայնառությունների վրա, ժամանակ առ ժամանակ հայտնվում են սուր ակորդներ, ընդ որում լինել միավորները հնչում են ցածր ռեգիստրում, իսկ ակորդները՝ բարձր: Այս ամենը սրեղծում է հսկայական երաժշտական տարածական ընդգրկումի տպավորություն: Դրանում նկատելի է, որ կոմպոզիտորը փրայպերում է ասոցիատիվ նմանությունների նուրբ միջոցների: Կոմպոզիցիոն այսպիսի միջոցներով հեղինակը վերարտադրել է բանաստեղծության մեջ նկարագրվող գեղարվեստական կերպարի մասշտաբը:

Օրինակ 15



Նկատելի է, որ թր նյունանը այս ակորդների հնարավորություն է տալիս հնչել մնացած ամբողջ նյութից առանձնացած, ինչը նույնպես մասշտաբային ծավալի տպավորություն է սրեղծում:

Նշենք, որ այսպիսի հարվածների յոթ կրկնությունները, ակորդային կուլմինացիաների հետ միասին, ռոմանսի չեի մեջ աստիճանաբար ավելի ու ավելի բարձր են տեղակայվում, և դրանում նույնպես կարելի է դիտարկել Արագած սարի հետ կերպարային նմանությունը:

«Սառը փչեց աշնան քամին» բանաստեղծությունը: Արդեն դիտարկված ռոմանսները կասկած չեն բողոնում, որ Հ.Սյրեփանյանը երաժշտության մեջ պարկերավոր է ներկայացնում կերպարները: Նա կիրառում է ասոցիատիվ երաժշտական նմանությունների համակարգ, որտեղ բանաստեղծի բառերը տեսանելիորեն պարկերակում են: Այս անգամ նույնպես կոմպոզիտորն ընտրել է հարմոնիկ ուղղահայացների արպեջոններով շարադրման հնարը՝ սրեղծելով քամուն նմանակող երաժշտական պարտանք: Ուղղահայացներն ինքնին սոնորիտական են: Գրեթե ամենուրեք դրանք լադից դուրս, ինքնաբավարար ակորդային ուղղահայացների գունեղ համակցություններ են, որոնք չեն լուծվում և մեծամասամբ պոլիհարմոնիկ են: Մեր հաշվով, բանալիի մոտ նշված սի բեմոլը տոնայնություն ցույց տվող նշան չէ: Անգամ մեղեդին, որի լադային կառուցվածքը կարելի է սահմանել առանձին մեղեդային հարվածների սահմաններում, չի տեղավորվում ընդհանուր լադային համակարգի մեջ: Այն փաստը, որ մեղեդին սկսվում և ավարտվում դո նոտայով,

որը միայն մեկ անգամ վերադառնում է ռոմանսի միջին բաժնում, ցույց է տալիս, որ այն չեականորեն ամրագրվում է, որպես տոնիկական եռահնչյունի կլիկայային տոն, քանի որ հարմոնիայի ու մեղեդու որոշ հարկանիշների համաչափ, ռոմանսի ընդհանուր տոնիկական F-ն է: Օրինակ ենք բերում ռոմանսի ամբողջ տեքստը:

Օրինակ 16



F տոնիկայի հարկանիշներից են նվազակցության չափ չեռքի պասսաժները, որտեղ հաճախ է դեպի «F» տոնիկական վերադարձ տեղի ունենում: Բայց դրա վրա միշտ շերտավորվում են պոլիտոնալ ակորդային ուղղահայացներ:

Դրա հետ միասին, եթե այս սրեղծագործությունը պարկերացները բարդ լադային համակարգում, որը լադային փոխադրություն է թույլատրում, ապա կարելի է համարել, որ այդ պոլիտոնալ շեր-

Համեմատական վերլուծություն

լավորումները կարող են փոխակապակցված լինել հենց չևսփոխվող «սահող» լադային համակարգի շրջանակներում:

Առաջին բաժնում լադը նման է հերևյալին.



Միջին բաժնում՝ հերևյալ երկուսին.

ա)

բ)

Եզրափակիչ բաժնում.



Այս շարժական լադային համակարգում ռոմանտի հարմոնիկ լեզուն հնարավոր կլինե՞ր դասակարգել որպես լադային հարմոնիա: Մակայն դա կլինե՞ր միայն չևսական: Իրական հնչողության մեջ սկորդային շերտավորումները արպեջարությունի հնարում այնուամենայնիվ ներկայանում են որպես հնչյունային միջոցներով նմանակումով պարկերավորության միջոց, և դրան նպաստում է երաժշտական արտահայտչականության և բանաստեղծական տեքստի բովանդակության մեջ գոյություն ունեցող կապը: Մենք դիրավորյալ բանաստեղծական սկզբնաղբյուրի տեքստը ներկայացնում ենք երաժշտական արտահայտչամիջոցները նկարագրելուց հետո:

Մառը փչեց աշնան քամին

Ուռիները դող առան...

Ա՛խ, տերևները չոր-չոր ու դեղին

Տխուր, տխուր վար ընկան:

Մենակ ազգավն ծառի ճյուղին

Լուռ ծվարեց սև հագած.

Ա՛խ, մենակ ես ձեռքս ծոցիս՝

Աչքս ձեր դրռան մընաց... (8. էջ 38-39):

Բանաստեղծության յուրաքանչյուր բառակապակցության մեջ իրական պարկեր է երևում. և՛ ուռեկու քամուց դողացող, թեքված ճյուղերը, և՛ ճյուղի վրա սև ազգավը, և՛ դեղին տերևները: Բանաստեղծության պարկերի այս բոլոր մանրամասներին միավորվում է ընդհանուր պարմառը՝ աշնանային սառը քամու պոռթկումը, և դա լավագույնս արտահայտվում է բանաստեղծության խոսքերի և դրան ուղեկցող երաժշտական պարբանքի մեջ, որը վերարտադրում է թե՛ քամին, թե՛ մարդու գիրակցության մեջ դրա արտացոլումը:

«Հայրենի աղբյուր» բանաստեղծությունը: Հարո Մարտիանյանի՝ Ա.Բասահյանի տեքստերով գրված ռոմանսների դիրարկումն ավարտվում է «Հայրենի աղբյուր» ռոմանտի վերլուծությամբ:

Այս ռոմանսը լավագույնս եզրափակում է մեր ներկայացրած շարքը, որը կոմպոզիտորը հարուկ չի առաջադրել, սակայն այն կայացել է արտահանական բերումով: Հավանաբար դա նաև կոմպոզիտորի մրաօնության դրսևորման հերևանք է, որը քիտում է գեղարվեստական ձգտումների հեղինակի ներքին համոզումից: Չէ՞ որ դժվար է պարկերաց-

նել, թե երաժշտական մարմնավորման համար ընտրված բոլոր պարկերները կրեղավորվեն ընդհանուր իմաստային շրթայի մեջ:

Հայրենի աղբյուր,

Երգեսս վճիտ

Հյուսել կուգայի

Բյուրեղ կարկաչիդ:

Ես հիմա այնպե՛ս

Հոգնած եմ ու լուռ,-

Դո՛ւ հավերժ կերգես,

Հայրենի աղբյուր...

1913թ. մայիսի 31

Այս բանաստեղծության (3. էջ 272) մեջ այլաբանությունը իմաստի գլխավոր կրողն է: Լսար էության, հին ընկերոջ՝ աղբյուրի համեմատությունը բանաստեղծի հոգեվիճակի հետ ոչ միայն այլաբանություն է, այլև փոխաբերական սկևարկ կյանքի ապրումների մասին և, վերջապես, Ժամանակի խորհրդանիշ, որը բանաստեղծի համար հեռուն է սլանում, բայց և Հավերժության մեջ կրում է նրա ստեղծագործությունները:

Իսկ ինչպե՞ս է այս կերպարայնությունն իրականացրել կոմպոզիտորը: Արդյո՞ք նա կարողացել է արտահայտել հակիրճ բանաստեղծության փիլիսոփայական ընդգրկումը, որը միավորում է և՛ բանաստեղծական մտքի խորիմաստությունը, և՛ Կեցության իմաստը:

Մեր դիրարկած ռոմանսներից սա ամենից ավելի շար է հագեցած հնչյունային նյութով: Երաժշտական նյութը շարժուն է ու հարմոնիկ առումով լարված: Երաժշտական մարմնավորման մեջ համարեղվում են տրեմոլանոն՝ խիտ պոլիֆոնիզացված ֆակտուրայի հետ: Այսպիսի փոխարացումն ինքնին իմաստային երկակիություն է ստեղծում: Տրեմոլանոնների «առկայծող» հնչյուններում «լսելի» է առվի շայնը, իսկ խիտ հարմոնիայով հագեցած շարժուն ֆակտուրայում արտացոլվում է երաժշտական արածականություն՝ հնչյուններով արտահայտված մի ամբողջ աշխարհ: Մակայն ամենակարևորն է՝ երկու բևեռային գեղարվեստական երևույթների համակցումը: Առվակի նմանակումը գրկվում է հնչյունային համալիրների հսկայական և շոշափելի «աշխարհի» ներսում: Փոքրի ու մեծի այդ համակցության մեջ դրսևորվում է բանաստեղծական բովանդակության առաջնայինը լինելու էությունը:

Օրինակ 19



Երաժշտական հանձնաժողով 3(38)2010

«Հեյ, Արագած» ռոմանտում կուլմինացիան գրվում էր ոսկե հարման կերպում՝ ամենաբարձր դինամիկ զագաթնակերպում («ff»): Իսկ այս ռոմանտում այն կրկին իրականացված է գործիքային շերտի միջոցներով, բայց հակադարձ՝ դինամիկ անկման հնարով, «pp» նյութանսի վրա (17-18 փակեր):

Օրինակ 20



Սակայն այսպիսի կուլմինացիան շար դրամատորգիական դեր ունի: Այն կոչ է լռության և Կեցուքյան իմաստը խորությամբ իմաստավորելու:

Չնի եռամասնությունն իրականացվել է մեզ արդեն հայրնի հնարով՝ առաջին քառափոփ կրկնությամբ, և այդ իմաստով բանաստեղծական բովանդակությունը նոր մեկնաբանություն է ստացել: Այն ժամանակը, որում բանաստեղծը խորհում է, ոչ միայն դեպի հեռուն է տանում: Մտքի ուժով այն կարող է չգրել նաև դեպի անցյալը, դեպի հիշողությունները, դեպի այն ակունքները, որոնք բանաստեղծն այլաբանորեն աղբյուր է անվանում:

Ռոմանսի ինտրոնացիոն լարվածքը, ինչպես Հարո Սյրեփանյանի ռոմանսների նախորդ օրինակների մեծամասնության մեջ, կապված է վանկերգային երգեցողության հետ: Սակայն փոխադրված մեղեդային դարձվածքները լայնորտիվային կրկնողությունների հարկանիշներ են կրում: Մեղեդու կազմակերպման ընդհանուր սկզբունքը անկյունաքարային պահերին ենթարկվում է հետևյալ ընդհանուր ռիթմական բանաձևին. (♩ ♪ ♪ ♪ ♪ ♪) (♩ ♪ ♪ ♪ ♪ ♪) կամ նրա ձևափոխություններին (♩ ♪ ♪ ♪ ♪ ♪): Դա երաժշտական նյութին փոխադրական միանմանության բնույթ է հաղորդում: Կարծես ֆրագմենտներն իրենք երաժշտականորեն հանգստանում են: Բերենք մի քանի օրինակ:

Օրինակ 21



Այս սկզբունքին են ենթարկվում բոլոր գծերը՝ թե՛ վոկալ, թե՛ գործիքային նվագակցության մեջ դրսևորվող փոքրերակումները: Լադային կազմավորումը խորամտիկ է: Այն կրեթենք հնչյունաշարի փեքով: Լադը էոլական է՝ երկրորդ, հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ աստիճանների փոքրումով:

Օրինակ 22



Իջեցված երկրորդ աստիճանը փոշուգիական սեկունդայի երանգ է հաղորդում, իջեցված հինգերորդ աստիճանը՝ լոկրիական կվինտայի: Բարձրացված վեցերորդ և յոթերորդ աստիճանների շնորհիվ՝ լադի վերևի մասում իոնական փեքային հարկանիշներ են ստեղծվում, իսկ ներքևի փեքային հարկանիշները՝ ձևավորվում է մեղեդային միևնույն:

Սակայն ռոմանսի երկու առանցքային պահերին կարևոր դեր է խաղում ֆա դիեզ ալտերացիան: Կուլմինացիայում նրա փոխարինումը ֆա բեկարով ստեղծում է փոքրացրած եռահնչյուն, որը լադային համակարգում հայ երաժշտությանը բնորոշ լոկրիական փեքային վրա հիմնվող դոմինանս է հանդիսանում, իսկ եզրափակիչ կադանսի գոյում ծառայում է որպես փոփոխության վարկերաց չգոդականությունն ընդգծող փոշուգիական սեկունդա:

Այսպիսով, համոզվեցինք, որ կոմպոզիտորի միջոցով միասնական երաժշտական և կերպարային – իմաստային շարքի մեջ է միավորել Ա.Իսահակյանի բանաստեղծությունները, որոնք իրականում գրվել են փոքրեր ժամանակներում և փոքրեր առիթներով: Իսկ կերպարային փոխադարձ լրացումների երևույթն, ինքնին, ավելի շուրջ քիտում է Հարո Սյրեփանյանի ստեղծագործական մտածողության կազմակերպման առանձնահատկություններից, ով հայ մեծ բանաստեղծի ժառանգությունից դուրս է բերել գեղարվեստական նշանարտության «մասնիկներ», որոնք համակցության դեպքում ի հայտ են բերում ամբողջական և կարարյալ կերպարային Աշխարհ:

ԾԱՆՈԹՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1. Գյոդակյան Գ.Շ., Ռոմանոս Մելիքյան, Ե., 1960:
2. Իսահակյան Ա., Երկերի ժողովածու, հ. 1-ին, (խմբ. Լ.Ն.Արագյան), Ե., Հայաստան, 1973:
3. Հարությունյան Ա.Գ. և Բարսամյան Ա.Ա., Հայ երաժշտության պատմություն, դասագիրք, Ե., Նոր դպրոց, 1996:
4. Атаян Р.А., Мурадян М., Армен Тигранян., М.:Музыка, 1966.
5. Тигранов Г., Аро Степанян. Очерк жизни и творчества., М.:Музыка, 1967.
6. Երգեր և ռոմանսներ, (խոսք՝ Ա.Իսահակյանի, կազմ.՝ Լ.Ա.Աստվածատրյան, Ե., Հայաստան, 1975:
7. Իսահակյան Ա., Երգեր և ռոմանսներ, Ե., Հայպետհրատ, 1955:

Резюме

Summary

В аналитической статье аспиранта ЕГК им.Комитаса Армена Мосесовича Арменакяна "Песни и романсы армянских классиков на слова Аветика Исаакяна" представлены романсы Романоса Меликяна, Армена Тиграняна и Аро Степаняна, написанные на основе стихотворений Аветика Исаакяна. Автором проведён не только тщательный анализ формы произведений, рассмотрены ладовые и гармонические особенности, но и сравнительный анализ музыкального и поэтического текста сочинений.

Analytical Review: Post-graduate of YSC after Komitas, singer Armen Mosesi Armeniakyan introduces the article "Armenain classical composers' song's and romances in Avetik Isahakyan's poems". The subject of this article is scientific-analytical study of a number of musical works by Armenian composers in poetic texts by A.Isahakyan.

**ԱՐՄԵՆ ՄՈՍԵՍԻ
ԱՐՄԵՆԱԿՅԱՆ**

**Երգիչ
Կոմիտասի անվ. ԵՊԿ ասպիրանտ**

Հայ մեծ կոմպոզիտոր Ավետ Տերտերյանը, ինչպես հայրնի է, այն հեղինակներից է, ովքեր մասնակից են 20-րդ դարի 60-ականների հայ երաժշտության պոռթկումին, որը ծնունդ է տվել ավանգարդիզմի ազգային ալիքին (2. էջ 270, 339): Նրա սրբազանություններից մեկը փոքր ժամանակի գործերը քիչ են: Իսկ մեծակերպ կրավների նկատմամբ կոմպոզիտորի չգրումները դրսևորվել են ամբողջ աշխարհին հայրնի դարձած

յունքում միայն: Այդ երևույթը, որը մենք անվանում ենք «տոդամիջյան իմաստ», բանաստեղծական խոսքի էությունն է հանդիսանում: Իհարկե, աղջկա քախիծն արտահայտվում է այն ժամանակ, երբ նա ամբողջ գիշերը լացել է: Սակայն արևածագին տիրությունը ցրվել է, իսկ գիշերը լացող ուռենու կերպարով աղջիկն արևածագին կերպարանափոխվել է: Երջանկության պայծառ հույսը չորացրել է նրա արցունքները: Այս պարզ պարմությունը միայն բանաստեղծական փոխաբերական համեմատության մեջ է գեղարվեստական խորհրդանշական կերպարի գծեր սրացել, որն ըստ էության հանդիսանում է արվեստի առանցքը:

Ա.Տերտերյանն այս բանաստեղծական պարկերը մարմնավորել է նույնքան յուրահայտով չևի մեջ, որքան Ա.Իսահակյանը: Թվացյալ ավանդական ոճի մեջ նա կիրառել է այնպիսի երաժշտական

ԵՐԿՐԱՆԻՅԱՆ ԵՎ ՊՈՒԵՏԻԱ

Ա.ԻՍԱՀԱԿՅԱՆԻ մեկ բանաստեղծության երաժշտական երկու մեկնաբանությունը

«Ամեն գիշեր իմ պարտեզում». Ա.ՏԵՐՏԵՐՅԱՆ, Ս.ՈԱԽՄԱՆԻՆՈՎ

սիմֆոնիաներում և օպերաներում: Դրա հետ միասին, Ա.Տերտերյանի վոկալ գործերի ոչ մեծ ցանկում տեղ է գրել Ավ. Իսահակյանի «Ամեն գիշեր իմ պարտեզում» բանաստեղծությանը գրված ռոմանսը, որում դրսևորվել է կոմպոզիտորի սրբազանության մեկ այլ կողմը: Նրանում տեղ է գրել բանաստեղծական նուրբ ճաշակը, վոկալ մեղեդու արտահայտչականությունը, հարմոնիկ համադրությունների նուրբ ինքնատիպությունը: Ա.Տերտերյանի ոճի այդ առանձնահատկությունը շատ րպավորիչ է, քանի որ տոնայնական ֆունկցիոնալ մրաժողության սահմաններում հեղինակը թարմ և գունեղ երաժշտություն է սրբազան, որում մեղեդայնության և հարմոնիայի փոխհարաբերությունը շատ նրբագեղ է (1. էջ 115, 26-29):

արտահայտչամիջոցներ, որոնք սովորական երաժշտական հյուսվածքին անսպասելի ինտոնացիոն և հարմոնիկ հարկանիչներ են հաղորդում: Ակներևության համար բերենք երաժշտական տեքստի երկու էջ և դրանք մեկնաբանենք: Օրինակներից յուրաքանչյուրը համապատասխանում է բանաստեղծական մեկ տառ:

Օրինակ 2



Օրինակ 1
 Ամեն գիշեր իմ պարտեզում
 Լալկան ուռին, հեզ ուռին
 Վշտատոչոր լաց է լինում,
 Լաց է լինում իմ ուռին:
 Եվ սրբում է առավոտու
 Կույս արևը նագելի
 Հուր ծամերով հեզ ուռենու
 Արցունքները բյուրեղի...

Բանաստեղծական տեքստը քննարկական է: Բանաստեղծի միտքն այս անգամ ևս փոխաբերական համեմատություն է: Լացող ուռենին, որը հայ գրականության և նաև երաժշտության մեջ հաճախ է մարմնավորում աղջկա տիրությունը, համեմատվում է դեռատի աղջկա հետ, որը չորացրել է ուռենու արցունքները: Ինչպես արդեն առիթ ենք ունենել նշելու, բանաստեղծը հաճախ է իր այլաբանությունների մեջ խորապես իմաստավորում, որը վերջնականորեն բյուրեղանում է համեմատության արդ-

Անգամ ըստ տեսողական նկարագրի, երաժշտական նյութի զարգացման ամբողջ գրաֆիկան և՛ տեսանելիորեն, և՛ ակուստիկորեն ներկայացնում է լացող ուռենին: Երգարածի և դաշնամուրային նվագակցության ֆակտուրան աստիճանական վա-

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 3(38)2010

րընթաց է: Այդ նույն երևույթը նկատվում է նաև առանձին կառույցներում: Մեղեդու և դաշնամուրային ֆակտուրայի յուրաքանչյուր ինքնուսուցիչ պարզեր վարընթաց շարժման միություն ունի: Տոն է պալիս դաշնամուրային դարձվածքներից առաջինը: Պահված կվինտայի վրա՝ *f-moll* փոնիկական եռահնչյան ծայրի հնչյունների վրա, կառուցվում են ինքերվալներ, որոնք աստիճանաբար ընդգրկում են երկու հակադիր ֆունկցիաներ. փոնիկա՝ *f-as*, և առանց փերցիային փոնի դոմինանտա՝ *c-g*: Արտաքուստ պարզ թվացող այս հնարը ակուստիկորեն բոլորովին էլ պարզ չէ: Չգված կվինտային փոնը ավարակայից հետո մարում է, և արդեն փակիր 2-րդ կեսում պահվող լարերն սկսում են հնչել փարբեր օբերտոնային հնչյուններով: Տոնիկական փերցիայի ավարակայի ժամանակ հնչում է 1-ին և 4-րդ օբերտոնների (*f* և *as*) լարվածքը, իսկ դոմինանտային կվինտայի ժամանակ՝ 3-րդ և 9-րդ օբերտոնները (*c-g*): Այս հնարը կրկնվում է չորս անգամ: Այլ կերպ ասած՝ կվինտային չայնառությունը ռեզոնանսային լարերի դեր է կատարում*, որոնք հնչեցնում են դաշնամուրային ֆլաժոլետները: Այս հնարը ռոմանտի առաջին բաժնում միակն է, սակայն հետագայում առանցքային դեր է խաղում սոնոր երաժշտության կերպարների վերարտադրման գործում:


Վոկալի մեղեդային գծի վանկերգային շարադրանքը նույնպես շատ ինքնատիպ է: Յուրիյացիաները փոխարինված են երկար փերցիային նոտաներով, որոնք կատարման ընթացքում երգչին (հավանաբար՝ փերցի) թույլ են պալիս երկար փերցիային նոտաներից յուրաքանչյուրը հագեցնել վոկալ երանգների փերցիային խաղի հնարներով: Ինքուսուցիչ լարվածությունը նույնպես ինքնատիպ է: Դեռևս առաջին ֆրագում, հայ երաժշտության մեջ հաճախ հանդիպող մեծացրած սեկունդայից անմիջապես հետո, ի հայտ է գալիս բավականին սուր հակադրություն դաշնամուրային մաժոր փոնիկական կվարտետրայակորդի (*c-f-a*) և վոկալի մեղեդու *as* հնչյունի միջև:

Նկատելով, որ հենց փերցիային փոնն է բնորոշում լադի ուղղվածությունը, և նրա փերցիային հենց նոր հնչած մեծացրած սեկունդայի հետ համադրության մեջ, հեզնանքի հարկանիշներ է հաղորդում երաժշտությանը: Երաժշտական այս հնարն ընդգծվում է նաև հաջորդ հարմոնիկ հնարի միջոցով: Հաջորդ փակում լա բեմոլը վերականգնում է միևնույն փերցիան, սակայն միաժամանակ իջեցնում է փոնիկական հնչյունը դեպի ֆա բեմոլ: Սա նույնպես ինքուսուցիչ խաղի սրամիտ հնար է: Կոմպոզիտորը կիրառում է իջեցնելու հնարը՝ անկայունությունը սրելու նպատակով: Ընդ որում, դա կապված է երաժշտական ինքուսուցիչների իջեցման ընդհանուր միությունի հետ: Հակասությունների այդ նույն խաղը, համակցվելով իջեցման գաղափարի հետ, իրականացվում է 6-րդ և 7-րդ փակների սահմանագծին նույնպես (այդ կարգի բոլոր հնարները

փերսպում նշված են շրջանակներով):

Նշենք իջեցումների ևս մեկ դեպք, որը վերաբերում է արդեն ոչ թե առանձին նոտաների, այլ մեղեդու ամենից ավելի վառ ինքուսուցիչ կորիզին՝ մեծացրած սեկունդային: Առաջին երաժշտական ֆրագում մեծացրած սեկունդան՝ *e-des*, համահունչ է հաջորդ ֆրագի մեծացրած սեկունդային՝ *h-as*: Դրանց փոխադարձ հարաբերակցությունը նույնպես վարընթաց է: Երկրորդ մեծացրած սեկունդան, որը գոյանում է բարձրացված չորրորդ և երրորդ աստիճանների միջև, փերցիային է կվարտա ցած, քան բարձրացված 7-րդ և 6-րդ աստիճանների միջև գոյացող մեծացրած սեկունդան է: Այս այլուսուցիչ փոփոխություններում դրսևորվում է լադային փոխակերպումը: Հնչյունաշարը երկու մեծացրած սեկունդայով լադի հարկանիշներ է չեղք փերում, որը հաճախ է հանդիպում հայ երաժշտության թե՛ ֆոլկլորային և թե՛ պրոֆեսիոնալ երաժշտության մեջ:

Օրինակ 3



Այսպիսով, ռոմանտի ամբողջ առաջին բաժինը ենթարկվում է անկման գաղափարին: Այն ընկալվում է որպես բանաստեղծության 1-ին փակ բովանդակության կերպարային նմանություն:

Գիտարկենք ռոմանտի երկրորդ բաժինը, որի բանաստեղծական փերսպի բովանդակությունը կապված է դրական կերպարայնության՝ լուսաբացի հետ: Տիրության հույզերը փոխարինվում են պայծառ հույսով:

Օրինակ 4



Արդեն նախորդ օրինակի վերջին փակներում՝ դաշնամուրային հակիրճ միջնանկագում, սկսվում է ռոմանտի նոր փուլը: Դա վերելքի ալիք է՝ առաջինը ռոմանտում: Այն սկսվում է փոնիկական եռահնչյուն-

երաժշտական խճճԱՍՏԱՆ 3(38)2010

* Արևելյան երաժշտական բազմաթիվ գործիքներում ռեզոնանսային լարերը հատուկ այդ էֆեկտի համար են դրվում: Դրանք կիրառվում են թառի որոշ տարատեսակների, հնդկական սիթարի, վիհի և այլն:

Համեմատական վերլուծություն

նից և *f-moll*-ի ու *a-moll*-ի դոմինանտների համադրության միջով անցնում է դեպի *a-moll*, *f-moll*-ի և *a-moll*-ի տերցիային հարաբերակցությունը հարմունիայի համադրման բնույթի կապակցում հնար է: Սակայն այս դեպքում այն ինքնատիպ է, քանի որ բնույթով մասնորոշումը ավելի համախառն է կիրառվում մասնորոշող տրեքտերցիային համադրություն, իսկ ավելի դեպքում մեծ տերցիա հարաբերակցության մեջ գրավոր միևնույն տրեքտերցիային հարաբերակցությունը շար ինքնատիպ է՝ դրամատորգիայի տեսանկյունից: Այն սահուն անցում է ապահովում դեպի մասնորոշող տրեքտերցիային համադրություն:

Իսկ եթե կլիմային հենարանները դասավորենք ըստ նրանց ի հայտ գալու հերթականության՝ ինքնին համադրելով օբերտոնային շերտավորումների հնարը, որը մեզ ծանոթ է բնույթի նախանվագից, այս կարգավի ուղղահայաց հենարանների մասնորոշող – միևնույն համադրումների վառ շարք, որն ընկալվում է որպես կերպարային պայծառացում: Նկատելով, որ բնույթի երկրորդ բաժնի 2-րդ և 4-րդ տակտերում վերադարձվում է նախանվագի ֆակտորային կորիզից ծագումնաբանորեն բխող գրաֆիկան: Օբերտոնային ենթաշարքների հնարը զարգանում է մինչև հարույ ընդգծված խորություն: Սակայն տերցիաների ու կլիմայաների համակցումը, որոնք առաջ են բերում օբերտոնային համախորհրդեր քասերում պահված բաց լարերի վրա (քասերում մաքուր կլիմայաների հաջորդականություն), իրականացված է ճշգրիտ տրանսպոզիցիաներով, որոնք պահպանում են գործիքի տարբեր ռեգիստրներում այն հարաբերությամբ, որն ապահովում է կոմպոզիտորի որոնած արդյունքը: Սա շար ինքնատիպ երաժշտական մարտիկական կամարաչև կապ է, որը նախաբանից փոխանցվում է երկրորդ բաժնին: Տեղի է ունենում կիրառվող հնարի վերամասնավորում: Եթե բնույթի սկզբում դա լացող ուռնու կերպարն էր, այս երկրորդ բաժնում, շնորհիվ վառ մասնորոշող գույների և հարմունիայի օբերտոնային հագեցածության, կերպարը լուսավորվում է, որովհետև խոսքը լուսաբացի մասին է, որը հույսի գեղարվեստական մարմնավորումն է:

Վոկալ երգաբաժնի ընդհանուր ինտոնացիոն շարադրանքն այժմ ավելի նրբագեղ և ճկուն է դարձել: Այն նույնպես լուսավոր երանգ է սրացել՝ մասնորոշող շնորհիվ, իսկ ինտոնացիան էլ ավելի պարկերակով ուղղվածություն ունի: Մոտիվներում ինտոնացիոն կառուցվածքների մեծ մասն ուղղված է դեպի վեր, այդ թվում նաև վերջին վերընթաց կվարյան, որը բնույթում միակն է:

Միաժամանակ նշենք մեղեդու մեկուսացման ասիմետրիան: Նրանում տեղ է գրել մեկուսացման ռիթմական փոփոխականությունը՝ բնույթի յուրաքանչյուր բաժնի եզրափակող փուլում: Երկու բաժնիներում էլ յուրաքանչյուր չորրորդ երգչական մեղեդու տակտում (առաջին բաժնում և վերջինում, եթե հաշվի առնենք նաև նախաբանը) վառ արտահայտված մեղեդային դուռ կա, որը հակադրվում է մեկուսական 6/8 չափին: Փոփոխական մեկուսացման հետ

համադրվելիս, այս դուռները մեղեդուն հաղորդում են որոշ ռիթմական ազատություն, նվազակցության ռիթմական իներցիայից անկախություն: Դրանում նույնպես դիտարկելի է նախ մեղեդային ազատության արտահայտությունը, այս նաև բանաստեղծության կերպարայնության հետ որոշակի գեղարվեստական կապը: Բացասականի ու դրականի դուռալիզմը երաժշտական կոմպոզիտորի զարգացման ընթացքում արտահայտվում է ձևակառուցման համաչափության և ռիթմական պարկերների անհամաչափության համադրման միջոցով: Դա տեղի է ունենում ինչպես մեղեդիում, այնպես էլ փոփոխական մեկուսում:

Կարելի է ասել, որ Ա.Տերտերյանն Ա.Բասիակյանի բանաստեղծության գաղափարն արտահայտել է նրբագեղ ու ինքնատիպ միջոցներով: Այստեղ լիովին վերադարձվել են բանաստեղծական տեքստի մեջ պարունակվող խորհրդանշանները: Կոմպոզիցիոն հնարներում կարելի է «գուշակել» թե՛ լացող ուռնու ուրվագիծը, թե՛ ծագող արևի տեսարանը:

1916թ-ին **Ա.Ռախմանիևովն** իր բնույթների շարքը համարեց Ա.Բասիակյանի «**Ամեն գիշեր իմ պարտեզում**» («**Ночью в саду у меня**») ստեղծագործությանը: Այս բանաստեղծությունը կոմպոզիտորին առաջարկել էր Մարիետա Շահինյանը: Ծանոթանալով Ա.Բլոկի թարգմանությանը, Ա.Ռախմանիևովը ասել է. «Շար երաժշտականորեն է զգում բնությունը հայ բանաստեղծը: Եթե բոլորը կարողանային նման ձևով գրել բնության մասին, մեզ՝ երաժիշտներին կմնար մի թեթև դիպչել տեքստին, ու երգը պարզապես կլիներ» (Գրական թերթ, 1973, N14, 3. էջ 386):

Ночью в саду у меня
Плачет плачущая ива,
И безутешна она,
Ивушка, грустная ива.
Раннее утро блеснет -
Нежная девушка-зорька
Ивушке, плачущей горько,
Слезы кудрями отрет (4. էջ 28).

Բանաստեղծության բովանդակությունն ու նրա բարձրագույն իմաստը աղջկա երկու հոգեվիճակներն են: Նա լալիս է գիշերը և հիշեցնում ուռնու մասին, իսկ առավոտյան չորացնում արցունքները և նրա հոգեվիճակը փոխվում է հույսի և ուրախության:

Կարող ենք ասել, թե պարտեզային չէ բանաստեղծական այս սկզբնաղբյուրի կրկնությունը երկու կոմպոզիտորների՝ Ռախմանիևովի և Տերտերյանի մոտ, որոնք երկու տարբեր ոճերի ներկայացուցիչներ են և ստեղծագործել են տարբեր պարտեզային ժամանակաշրջաններում: Ավելին, թե՛ Ավեր Տերտերյանի և թե՛ Մերգել Ռախմանիևովի ստեղծագործական մտեցումների հետ համեմատությամբ, այս բնույթները էականորեն հեռու են նրանց ստեղծագործական հիմնական ուղղությունից: Ռախմանիևովի հայտնի բնույթների շարքում նույնիսկ ավելի բնույթներ լրջորեն տարբերվում է հեղինակի տիպական ոճից:

Գիրարկենը Ս.Ռախմանինովի ռոմանսի փերսյորը՝ Ա.Տերտերյանի նույն ռոմանսի առանձնահատկությունների հետ համեմատելով: Ուսումնասիրության համար հետաքրքրություն է առաջացնում արդեն իսկ այն փաստը, որ միանգամայն փարբեր մշակույթների ներկայացուցիչ երկու կոմպոզիտոր դիմել են այս նույն բանաստեղծական սկզբնաղբյուրին՝ առավել ևս վերլուծական մեր աշխարհների ուղղվածության պայմաններում: Միանգամից օրինակ բերենք Ս.Ռախմանինովի ռոմանսի առաջին բաժնի նուրային փերսյորը՝ գործիքային կապող միջնակվազով:

Օրինակ 6 Ա .



Ռոմանսի առաջին բաժնի դաշնամուրային նվագաբաժինն, ընդհուպ միևնույն միջնակվազ, հիմնվում է մեղմ դիստանանսային հարմոնիկ ուղղահասցաների վրա, որոնք հենարան են հանդիսանում մեղեդային գծի համար: Ա.Տերտերյանի ռոմանսի հետ նմանությունը հարաբերական է, թեև այնտեղ նույնպես հարմոնիկ հյուսվածքը կիրառական դեր ունի: Իսկ ահա մեղեդու կառուցվածքում ու նրա շարադրման փրամաբանության մեջ որոշակի սկզբունքային նմանություն կա: Մեղեդին վերևի ռեգիստրից աստիճանաբար վարընթաց է, **g-moll**-ի 4-րդ աստիճանի ալտերացիան առաջ է բերում մեծացրած սեկունդայի ինյունացիան, իսկ նրան անմիջապես հաջորդում է բնական 4-րդ աստիճանը (5. էջ 421-425): 4-րդ աստիճանի բնական և ալտերացված շարադրանքի համարեղ կիրառությունն ուղղակի նմանություն է առաջ բերում Ա.Տերտերյանի ռոմանսի ինյունացիոն առանձնահատկությունների հետ: Հաշվի առնելով այն փաստը, որ հարմոնիկ **g-moll**-ում 6-րդ և 7-րդ աստիճանների միջև երկրորդ

մեծացրած սեկունդան է առաջանում, պարզում ենք, որ Ս.Ռախմանինովի ռոմանսի լադային համակարգը (կրկնակի հարմոնիկ) նույնպես նման է այն լադին, որում ստեղծվել է Ա.Տերտերյանի ռոմանսը:

Օրինակ 7 Երկու մեծացրած սեկունդաներով լադը:




Մերը փոփոխական է, սակայն զարմանք է առաջացնում մերրի թվային նշումի բացակայությունը:

Հարույկ հետաքրքրություն է առաջացնում միջնակվազի երաժշտական գրաֆիկան: Վարընթաց սերայորդները կերպարային առումով բնորոշում են ուռենու ցած իջնող ճյուղերը: Խոսքը վերաբերում է ոչ միայն նուրային պարկերների փետողական ընկալմանը, այլև վարընթաց ֆակտուրայի վայրիվերումների մեջ այս կերպարը ի հայտ է գալիս նաև զգայական ընկալմամբ: Հարույկ ուշադրության է արժանի հնչյունների սիմվոլիզմի փրամաբանական հաջորդականությունը: Սկսվելով միայնակ **b** հնչյունից, ֆակտուրան կարծես թե աստիճանաբար ճյուղավորվում է ավելի ու ավելի շար քանակությամբ չայների, իջնում է միևնույն **D-dur** եռահնչյան ներքին փոները, որի վրա, արդեն ռոմանսի երկրորդ բաժնի սկզբի հետ համընկնելով, շերտավորվում է **as** սկիորդային հնչյունը, որը եռահնչյունի հետ ուղղակի հակասություն է կազմում: Հենց նրա հետ էլ սկսվում է բանաստեղծության երկրորդ փոդը: Իսկ հակասումն ինքնին նման է Ա.Տերտերյանի ռոմանսում հանդիպած հնարին: Այս փաստն առհասարակ ինքնատիպ երևույթ է, քանի որ Ս.Ռախմանինովի ստեղծագործական ոճին բոլորովին բնորոշ չէ այնպիսի հնարը, որը կապված է կրրույկ հակասման հետ: Նրա ստեղծագործություններում, ավելի արույզ՝ հարմոնիկ լեզվում, ընդհակառակը, գերիշխում է ուղիղ փափուկ դիստանանսների ձևերի հերթազարդությունը՝ նրա անվերջ զարգացող մեղեդիների հետ համակցությամբ, որոնք երաժշտության մեջ բացարձակապես ռոմանտիկական ուղղության փեսակ են ներկայացնում (5. էջ 425): Սակայն հակասության առկայությունը, առավել ևս՝ մի դեպքում, երբ որպես ռոմանսի բանաստեղծական սկզբնաղբյուր ծառայել է Ա.Բասիակյանի բանաստեղծությունը, որը հայ ժամանակակից գրելաոճի կոմպոզիտոր Ա.Տերտերյանի ռոմանսում նույնպես գրական հիմք է հանդիսացել, իսկ երաժշտական հյուսվածքում առկա է նույն փոխի սուր դիստանստող հնար, դժվար թե կարելի լինի պարահասկանություն համարել:

Գիրարկենը Ս.Ռախմանինովի ռոմանսի երկրորդ բաժինը:

Օրինակ 8 Ա .



Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 3(38)2010

Բ.



Չարմանայի է, սակայն վարրնթաց շարժմանն անմիջապես հաջորդում է վերելք՝ երգաբաժնում դեպի ամենից բարձր հնչյունը՝ *b*, իսկ դաշնամուրային նվագաբաժնում՝ դեպի *D-dur* ակորդի շարադրանքը: Կոմպոզիտորն, սափիճանաբար, *D-dur* եռահնչյունը բերում է դեպի դոմինանտային համալիր: Նա կիրառում է թաքնված հնչյունը զարդանախաչված ֆիգուրացիաներով իջեցնելու սկզբունքը՝ այն համակցելով հակադարձ շարժվող, բարձր տեղակայված միջին գծի հետ: Ամբողջ տակալը գրվում է *d* հնչյունի չափանշանով վրա: Ընդհանուր առմամբ, այդ տակալը ռոմանսի թե՛ դրամատուրգիական, թե՛ դինամիկ կուլմինացիան է հանդիսանում:

Այնուհետև մեղեդին սահուն իջնում է դեպի տոնիկա: Սակայն մեղեդիում որոշ մեղմ լարվածություն է առաջանում շնորհիվ հարող ինտոնացիայի, որը հայրնվում է վարրնթաց շարժումից առաջ: Այս հնարը շատ արտահայտիչ է այն պարճառով, որ կոմպոզիտորն է հակակշիռն՝ ինտոնացիոն վարրնթաց շարժումների ամբողջ գծի համար (նշված է օրինակում):

Տոնիկայի ի հայր գալու հետ՝ նախազարդված պարկերներով ֆակտուրան անցնում է ավելի մեղմ ֆակտուրայի, որը ցրում է կուլմինացիոն լարվածությունը: Այս հարվածում ի հայր են գալիս օրերտոնային հարմոնիայի որոշ հարկանիշներ: Նշված հարմոնիան այնպիսին չէ, ինչպես դրսևորվել էր Ա.Տերյերյանի ռոմանսում, սակայն նույնպես կառուցված է քստում պահված տոնիկական օկտավայի վրա (այսինքն՝ ռեզոնացիայի համար բաց երկու լարերի) տերցիաների ու կվինտաների կառուցման սկզբունքի վրա: Այս հանգամանքում նույնպես երկու կոմպոզիտորների սրեղծագործական մոտեցումների բացահայտ նմանություն է դրսևորվում: Երկու կոմպոզիտորի ռոմանսների կերպարայնությունն իրականացվում է սկզբունքորեն միանման կոմպոզիցիոն հնարների օգնությամբ: Թեև դրանք գրվել են ռոմանսների տարբեր բաժիններում, սակայն նման են ինտոնացիոն միջոցները: Երկու դեպքում էլ ներքևի բաց լարերի

վրա տերցիաների ու կվինտաների համակցություններն իրականացվում են վարրնթաց հաջորդականությամբ:

Արտահայտչամիջոցների համընկնելու այս երևույթը ուշագրավ է: Կարելի է այսքան բացահայտ նմանությունների պարճառը որոնել բանաստեղծության բառակապակցությունների բնական առանձնահատկություններում: Մենք արդեն նկարագրել ենք այդպիսի մի քանի դեպք, երբ միևնույն բանաստեղծական տեքստի երաժշտական մարմնավորման ժամանակ տարբեր կոմպոզիտորների սրեղծագործություններում սկզբունքորեն համընկնում են կոմպոզիցիոն հնարները, այն դեպքում, երբ նրանց սրեղծագործական ոճական առանձնահատկությունները բացարձակապես նման չեն իրար: Սակայն բոլոր դեպքերում բանաստեղծական սկզբնաղբյուրները կոմպոզիտորները կիրառել էին բնագրով: Իսկ տվյալ դեպքում Ա.Տերյերյանը կիրառել է գրական բնագիրը՝ հայերեն, իսկ Ա.Ռախմանինովը՝ Ա.Բյուրի ռուսերեն թարգմանությամբ: Բնականաբար, այս բանաստեղծությունը հայերեն և ռուսերեն լեզուների ֆոնետիկ իմաստով բոլորովին տարբեր է հնչում: Նշանակում է, արտահայտչամիջոցների նմանությունը բխում է ոչ թե տվյալ բանաստեղծության ֆոնետիկ առանձնահատկություններից, այլ կերպարային խորհրդանշական ոլորտից, որն էլ առաջ է բերում միևնույն կարգի երաժշտական արտահայտչամիջոցների կիրառության փաստը: Դրանում էլ կայանում է նմանության հանգամանքը, որը մենք պարզեցինք ներկա հոդվածում:

ՃԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ավանդույթ և նորարարություն, Ավետ Տերտերյան-75, Եր., Արճեշ, 2005, 176-էջ:
2. Հարությունյան Մ.Գ., Բարսամյան Ա.Ա., Հայ երաժշտության պատմություն, Եր., Նոր դպրոց, 1996, 368-էջ:
3. Իսահակյան Ա., Երկերի ժողովածու, հատ. 1, (խմբ.՝ Վ.Ա.Մկրտչյան), Եր., Հայաստան, 1973, 464-էջ:
4. Ավետիք Իսահակյան, Երգեր և ռոմանսներ, (խմբ.՝ Ռ.Անդրիասյան), Եր., Հայպետհրատ, 1955, 142-էջ:

Резюме

Summary

В аналитической статье аспиранта ЕГК им. Комитаса Армена Мосесовича Арменакяна «Две интерпретации стихотворения А.Исаакяна. «Ночью в саду у меня» - А.Тертерян, С.Рахманинов» представлены романы А.Тертеряна и С.Рахманинова, написанные на основе стихотворения Аветика Исаакяна. Автором проведен тщательный анализ форм, рассмотрены ладовые и гармонические особенности, а также дан сравнительный анализ музыкального и поэтического текстов двух сочинений.

ANALYTICAL ARTICLE: Post-graduate YSC after Komitas Armen Mosesi Armenakyan introduces the article “Two musical analyses on one poem by Avetik Isahakyan” (“Every night in my garden”-Avet Tereryan and Sergey Rakhmaninov). Here are represented romances A.Tereryan and S.Rakhmaninov, based on the poem by A.Isahakyan. The authors write harmonic peculiarities of the poem and give relative analyses of musical, textual peculiarities by relative analytically method.

ԳՈՒՐԳԵՆ ՌՈՒԲԵՐՏԻ
ԲԱՎԵՅԱՆ

Երգիչ
Կոմիտասի անվ. ԵՊԿ սապիրանյ

Ալեքսանդր Աֆանասի Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան գրվել է Սոֆիա Պառնոկի լիբրետտով, որի համար սկզբնաղբյուր է ծառայել Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» էպիկական պոեմը: Բովանդակությունը հայկական ավանդական պարմություն է, որը նկարագրում է Թմբուկ բերդի հերոսական պաշտպանությունը: Այդ ամբողջ ավերակները գրվելու են Ախալքալաքի շրջանում: Օպերա-

ունեցել այս օպերայի համար սրեղծել խմբերգային նախերգանք, բայց չի հասցրել իրականացնել: Սակայն նախերգանքը, որի բնույթը, իհարկե, դժվար է պարկերացնել, մեր կարծիքով լրջորեն կհասիրեր ներկայացման դրամատուրգիական հավասարակշռությունը: Հակասությունն այն է, որ պրոյոգ – նախերգանքը պետք է գրվեր Հ.Թումանյանի պոեմից աշուղի երգի տեքստի հիման վրա (1. էջ 303): Աշուղն այդ երգի միջոցով ժողովրդին տեղեկացնում է օպերայի հիմքում առկա իրադարձությունների շուրջ հին ավանդույթի մասին: Օպերայում աշուղը արքունական երգիչ է, իսկ այնուհետև՝ Թաթուլ իշխանի նկատմամբ դավադրության կազմակերպման մասնակիցներից մեկը:

Դրամատուրգիական տեսանկյունից, այս վոկալ-խմբերգային տեսարանը այնքան էլ տեղին չէր դիրվի: Օպերայում տեղի ունեցող իրադարձությունների «պարմոդ» աշուղը և նրա կերպար աշու-

«Ալմաստ» օպերայի դերերգերի կերպարային վերլուծության առանձնահատկությունները

յի հերոսը՝ հայ իշխան և գորավար Թաթուլը հիշատակվում է ազգային էպիկական պարմություններում:

Ա.Ա.Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան ներկայացնում է հայ դասական օպերային արվեստի այն ոլորտը, որտեղ առկա են ռուսական օպերային ավանդույթները: Դա զարմանալի չէ, քանի որ Ա.Ա.Սպենդիարյանը ժառանգել է Ն.Ա.Ռինսկի-Կորսակովի կոմպոզիտորական դպրոցի ավանդույթները (1. էջ 274): Ն.Ա.Ռինսկի-Կորսակովը Ա.Ա.Սպենդիարյանին ուղղորդել է դեպի պրոֆեսիոնալ օպերային դրամատուրգիան յուրացնելուն, իսկ գլխավորն այն է, որ իր տաղանդավոր ուսանողին ցույց է տվել այդ դրամատուրգիայի սահմաններում էպիկական բնույթի խորը բովանդակությամբ ազգային օպերա սրեղծելու հնարավորությունը, որտեղ հիմք կարող են դառնալ հայ երաժշտական ֆոլկլորից քաղված մեղեդիական ակունքները: Հայ ավանդական երաժշտությանը բնորոշ մեղեդային մրաժողության և ռուսական դասական օպերային ավանդույթների միաշունչում երևույթը հանգեցրել է շատ յուրահատուկ արդյունքի: Բազմիցս Ա.Ա.Սպենդիարյանը, որպես երաժշտա-ինստրումենտալ նյութ կիրառել է ժողովրդական երգերի մեղեդիները՝ հարմոնիայի և կոնտրաստային տարբեր միջոցները, որոնք քաղվել են եվրոպական երաժշտության կոմպոզիտորական տեխնիկական շեքբերումներից: Ինչպես հայրն է, դրանք շատ ավելի վաղ, քան հայ երաժշտության մեջ, հարմարեցվել էին ռուսական երաժշտական մշակույթին, մասնավորապես՝ օպերային ժանրին:

«Ալմաստ» օպերայի առաջին գործողությունը: Հայրն է, որ Ա.Ա.Սպենդիարյանը մրադրություն է

ղը, իհարկե, որակական բնութագրով՝ հակասական կերպարներ են: Աշուղներից մեկը՝ պրոյոգի պարմիչը, յուրային կերպար է, իսկ օպերայի գործողության մեջ՝ աշուղը թշնամի է: Մրանք միևնույն պլանի երկու կերպարներ են, սակայն, այդուհանդերձ, բևեռային հակադիր դրամատուրգիական ֆունկցիա են կրում:

Բացի այդ, վարագույրի բարձրանալուց անմիջապես հետո Նադիր Շահի բեմ դուրս գալը ամբողջ գործողությանը սրբնթացության, շեշտակիության խթան է հաղորդում, ինչը ունկնդիրն ընկալում է որպես նվաճողների հարձակողական փրամադրության, որպես թշնամու կերպարի դրսևորում, որն արդեն մի քանի անգամ անհաջող հարձակվել է Թաթուլ իշխանի ամբողջ վրա:

Չի բացառվում, որ կոմպոզիտորը դիրավորյալ է հրաժարվել պրոյոգ սրեղծելու գաղափարից՝ Նադիր Շահի կերպարի ցուցադրումը առավել ցայտուն ներկայացնելու նպատակով: Ընդ որում, այդ կերպարը շեշտակիորեն ցույց տալու հաշվարկն արդարացվել է: Թե՛ վրյալ գործող անչի մուրքը նախապարտապետ նվազախմբային հակիրճ նախաբանում, թե՛ հենց նրա երգաբաժնում սկզբից ևեթ առկա է արտահայտիչ «ներխուժումի» էֆեկտը: Դա վերաբերում է անգամ այն հատվածներին, որտեղ տեմպը դանդաղում է մինչև *Lento*, որի դեպքում ևս նվազախմբային հյուսվածքը բարախում է և էքսպրեսիվ շարժման իներցիա է կուտակում: Այդ ամենն ի վերջո պասկվում է պարսկական շքեղ քայլերգով, որի երաժշտությունն է ներկայացնում Տիրակալ Պարսկաստանի գահի հզորությունը:

Նադիր Շահի մենախոսությունն, իրականում, երկխոսություն էպիզոդների հաջորդականություն է:

Օպերային արվեստ

Այսպես, դրամատուրգիական առանցք է նրա երգաբաժինը, որը փոփոխարարելով մի շարք երկրորդական գործող անհանց հետ: Այս տեսարանը մենք պայմանականորեն բաժանում ենք և մենախոսությունն էլ բաժանել ենք վեց էպիզոդների, որոնցից յուրաքանչյուրում Նադիր Շահի բնութագրի մեջ ինչ-որ մի բան փոխվում է:

Առաջին էպիզոդում նա ողբերգական երանգի հարցով դիմում է իր գորավար Ալի Մուրադին, և այդ հարցի մեջ հնչում է «թունոտ» երանգ: Այդ տրամադրությանը կարծես թե նախապարաստվում է նվագախմբի վերընթաց պասսաժների պոռթկումով:

Բնությո՞ւ սա կիսաերգեցողություն – կիսադեկլամացիա է: Այդպես կարելի է առավելագույն արտահայտչականությամբ չայնի մեջ փոխանցել «թունը»: Սակայն Նադիր Շահի երգաբաժնի մոտիվային գրաֆիկան ինքնին այս էպիզոդում մոտ է դեկլամացիային: Առաջին երկու ֆրագմենտի դիսանիական շար հարկանչական է: Այսպես, 1-ինը *mf* է հնչում, 2-րդ ֆրագմենտը դրան հակադրվում է *p*, որոնք թույլ են րալիս արտահայտիչ ցույց տալ կերպարը: Մերք բացահայտրեն, մերք բողոքական Նադիր Շահը Ալի Մուրադին հասկացնում է, որ ինքը տեղյակ է Թաթուլ իշխանի պարտության մասին:

Տվյալ դեպքում կոմպոզիտորը կիրառում է բվերգային երգեցողության տեխնիկան՝ մեկ հնչյունին մեկ վանկ համակցելու սկզբունքով: Այդպես են սովորաբար արտաբերվում խոսքերը սովորական խոսքի ժամանակ, և հուզական երանգը փոխանցվում է բառերն արտաբերելու մասերայի միջոցով: Հարցն ինքնին, ընդգրկում է հնչյունների բարձրությունների երեք վերընթաց գագաթնակետ, որոնցում հնչում է բաբնված սպառնալիք:

Օրինակ 1



Նվագախմբային ակկորդներն այսպես հենարանի դեր են խաղում մեներգչի վոկալ գծի համար, իսկ լարայինների բասերում ցածր ռեգիստրում հնչող տերցիաները, որոնք կրկնապարկվում են ֆագոտների նվագաբաժնում (սա գործիքների դասական համադրման օրինակ է), երաժշտական ուղեկցությանը մռայլ բնույթ են հաղորդում: Անգամ էպիզոդի ընդհանուր տոնայնությունը՝ *fis moll*, պարահականորեն չի ընկրվել: Տվյալ համարեքսում հարմար է տեղավորել և՛ լարայինների, և՛ ֆագոտների, և նաև կիրառել գալարափողերի նվագաբաժիններում այն չայնասահմաններում և կարելի է սրանալ տվյալ կերպարայնության համար անհրաժեշտ տեմպոյին էֆեկտներ: Նշենք նաև, որ հարցադրման պահին գալարափողերի օստրինատներն, աստիճանաբար, ուժգնացող հնչողությամբ ընկալվում են որպես սպասումի խորհրդանիշ, որովհետև Նադիր Շահը պարասիանի է սպասում:

Երկրորդ էպիզոդը՝ Ալի Մուրադի պարասիանը, նյարդայնորեն է կարարվում, *p* նյունստով: Չորավարի անհանգստությունը հիմնավորված է, քան

նի որ նրա առջև դաժան և բռնակալ մի կառավարիչ է, որն անկանխարեսելի անհար է և պարասարանն մի դաժանությամբ:

3-րդ էպիզոդում լարվածությունը էլ ավելի մեծ է: Հակիրճ երկխոսությունը Նադիր Շահի և Ալի Մուրադի միջև սրանում է բացականչությունների բնույթ, որը կարադի է հնչում Նադիր Շահի և սարասափով լի՝ Ալի Մուրադի երգաբաժիններում: Այս երկխոսությունը հնչում է լարայինների *tremolando*-ի ֆոնով, որոնք վերարտադրում են *fis moll*-ի կրկնակի դոմինանտային փոքրացրած սեպտակկորդով: Այս էպիզոդը հնչում է լարվածության բարձր աստիճանով: Հարմոնիկ հենքը հերագայում փոխադրվում է սուբդոմինանտ ակկորդի (*S 4/6*) և միայն ավելի ուշ է վերադառնում դոմինանտին, որն իր հերթին տոնիկայում չի լուծվում, այլ անցնում է վեցերորդ աստիճան: Ընդհարված կադանսն ավարտվում է բասերի վարընթաց քայլով, որոնց վերջին դարձվածքները ներկայացնում են լոկրիական պենտատոնորդ *fis - moll* -ի 5-րդ աստիճանից:

Օրինակ 2



Այս պենտատոնորդի վերջին նոտան հնչում է լայն դասավորության փոքրացրած սեպտակկորդի բասում՝ տոնայնական անորոշության պայմաններում. բանալիի մոտ նշաններ չկան, իսկ, ինչպես հայտնի է, փոքրացրած սեպտակկորդը կարելի է լուծել գոյություն ունեցող բոլոր տոնայնություններում:

Օրինակ 3



Տվյալ համարեքսում հարմոնիայի մեջ այս անորոշությունը կոչված է արտացոլելու սուրհանդակների սարասափը տիրակալի նկարմամբ: Սուրհանդակների երգաբաժինները Նադիր Շահի վոկալ գծի հետ երկխոսության ժամանակ արտահայտում են միաժամանակ և՛ վախ, և՛ ակնածանք, և՛ հնազանդություն:

Նադիր Շահի երգաբաժինը 4-րդ էպիզոդում, հնչելով հարմոնիայի անորոշության ներքո, արտահայտչականությամբ է օժտված: Այն կառուցված է ավելի ու ավելի բարձր նոտաներ ներգրավելու սկզբունքով, և այդ երաժշտական գրաֆիկայում առկա է դիսանիկայի աստիճանական ուժգնացման էֆեկտ՝ համապարասիան դեպի ավելի բարձր նոտաներ վերընթաց շարժման, դեպի այնպիսի հնչյուններ, որոնք չայնի տեսությունայում անխուսափելիորեն կարարողական խնդրի հետ կապված լարվածություն են առաջացնում:

Նվագախմբի ավելի ու ավելի ակտիվ դերը համապարասիանում է երգաբաժնի լարվածությանը: Հյուսվածքը ամբողջ ընթացքում համալրվում է ֆակտորային նոր շարադրանքներով:

Նադիր Շահի հետ երկխոսության ժամանակ

(դա 5-րդ էպիզոդն է) մասնակցում են երեք գորապետ՝ ճակատամարտի գլխավոր գործերի գորավարները: Նրանց միջոցով խոսվում է պարտության պարճառած վշտի մասին: Նրանք փորձում են արդարանալ, գլխավորը՝ նրանք վախենում են Տիրակալի պարծից: Շար դիմամիկ է իրականացված իմիրացիան 1-ին գորապետի և գալարափողերի ու շեփորների նվագաբաժինների միջև:

Առաջին գորապետի ինտրուսցիայում և լարայինների, գալարափողերի ու շեփորի պարասիաններում հնչում է նոր գրոհի կոչ և անհաջողություն կրած ենթականների նկարմամբ ցասում:

Չորապետների նկարմամբ հանդիմանությունը արտացոլվում է հռետորական հարցական, ապա՝ հասարակության ֆրագների միջոցով, ինչն էլ ավելի է սրում լարվածությունը:

Այստեղ կարարման առումով կարևոր է ինտրուսցիաների խաղը: Բոլոր ֆրագներն սկսվում են վերընթաց թռիչքով՝ նրան լրացնող հեղազա վարընթաց շարժումով: Թռիչքի եռարունային ինտրուսցիա է, իսկ գծային քայլերի գրաֆիկան կամ խրոմատիկ է՝ փոքրացրած եռահնչյունի շարադրանքով, կամ շարժվում է ամբողջ տունային տեղախորդի հնչյուններով:

Այս տեսարանում 5-րդ էպիզոդը բեկունային է դառնում: Նադիր Շահի երգաբաժնում ի հայտ է գալիս որակական նոր բնութագիր՝ ռազմական գործողության հաջողության նկարմամբ վարահություն, որն իր հերթին պետք է նրա զինվորներին խիզախություն ու հաղթանակի չգրելու կամք հաղորդի:

Նկարները, որ այս տեսարանի տրամադրության մեջ բեկուն են առաջ է բերում 3-րդ գորապետը, ոչ թե Նադիր Շահը: Պարակասրանի տիրակալը միայն շարունակում է լսել 3-րդ գորապետի իրեն շոյող խոսքերը: Հոգեբանական «հուշումի» մեջ դրամատուրգիական նրբություն կա: Նադիր Շահը խելքով չի փայլում և հակված է ավելի շար հուզական արձագանքների, քան ռազմավարական եզրահանգումների: Դրանում մենք կհամոզվենք նաև հեղազայում: Չէ՛ որ Ալմասրի դավաճանության միջոցով հաղթանակի գաղափարը նույնպես պարկանում է ոչ թե Նադիր Շահին, այլ նրա խորհրդակալին:

Նադիր Շահի երգաբաժնի զարգացումը կապված է նրա փառամով՝ ընդհուպ մինչև Հնդկաստան հասնող նվաճողական քաղաքականության մասին պարմությունների հետ: Այս բաժնում կարարողը պետք է կիրառի գրոտեսկի հնարներ: Այսպես, հանդիսավոր ֆրագներում, որտեղ նկարագրվում է Նադիր Շահի ծրագրերի հուժկու չափերը, Նադիր Շահը պետք է ցույց տա սնափառության երանգ, քանի որ ոչ մի խելամիտ ղեկավար այդպես բացահայտրեն չէր ցուցադրի իր ուժը արքունիքի նկարմամբ, առավել ևս, որ հենց նոր պարտության զգացողություն է ապրել:

Նադիր Շահի մենախոսության այդ հարվածը կարարելիս մեներգիչը պետք է չափազանցության հասցնի հաղթանակի զգացումը, պայմաններ սրեղծի, որտեղ կերպարային չափազանցությունը կդառնա անբնական, իսկ արքունականների խոնար-

հումն ու քճանքը դիտվում է որպես միապետի կամքին աներեր ենթարկվելու արդյունք՝ անկախ իրադարձությունների մասին նրանց ունեցած առողջ ընկալումից ու մրաժողությունից:

Նադիր Շահի մենախոսության այս հարվածում առկա է երկու հանգամանք, որոնք կարարողը պետք է առանձնացնի ընդհանուր բնութագրից: N 15-ում (2. էջ 43) հնչում է հեղազայ ֆրագը. «Պիտի դառնամ 2-րդ Թեմուրը»: Այստեղ Նադիր Շահը պետք է ցուցաբերի իր նկարմամբ հիացմունք և՛ չայնի մեջ, և՛ ժեստերում, իսկ N 18-ում երգչի չայնում պետք է հնչի անթաքույց արելություն: Դա նրա զգացմունքների միակ ճշմարիտ դրսևորումն է. «Թող վշտեն ձիերս Չոհաբեմեր, գահեր և՛ փառք, և՛ խայն»:

6-րդ էպիզոդում (N 19, 2. էջ 58) նույնպես գրոտեսկ է դրսևորվում, սակայն բոլորովին ուրիշ ձևով: Բնարական, հանդարտ և սահուն երաժշտական հյուսվածքում (*tranquillo molto*) հնչում են այնպիսի խոսքեր, որոնք իմաստով հակասում են երաժշտության բնույթին.

Դրամատուրգիապես ճշգրտորեն և տպավորիչ կոմպոզիտորը Նադիր Շահի մենախոսությունից անմիջապես հետո առաջ է բերում երգչախումբը: Խմբերգային տեսարանը ուղղակի անցնում է պարակական քայլերգին:

Վառ հակադրություն են սրեղծում սուրհանդակի խոսքերը, որոնցում արտացոլվում են Թաքուլ իշխանի արժանիքները: Ամբողջ դեռևս գրոհի չի ենթարկվել, իսկ «Ալագյազ աչերը» բնարական ժողովրդական երգի ինտրուսցիաները դարձել են Նադիր Շահի երաժշտական բնութագրի կերպարային հակադրությունը: Սուրհանդակի այս հակիրճ երգաբաժինը շար կարևոր է, որովհետև սուրհանդակը օգնում է Շահին, սակայն նա արժանապարտությանը և հարգանքով արտաբերում է Թաքուլի խոսքերը: Հավանաբար դրանք նրա վրա վառ ազդեցություն են թողել, ինչն առաջ է բերել Նադիր Շահի գայրույթը:

Այստեղ շար հեղաքրքրական մտրեցում է ի հայտ գալիս: Թաքուլի լայրմտրիվը կամ, ավելի ճիշտ լայրթեման կարարում է ոչ թե ինքը՝ Թաքուլը, այլ թշնամու սուրհանդակը: Դա նրբորեն արտացոլվել է կրրուկ տրոնայնական փոփոխության մեջ: Չնափոխված *cis-moll* տրոնայնությանը, որը կանգ էր առել վեցերորդ աստիճանի փոքր սեպտակկորդի վրա, հակադրվում է *as-moll* տրոնայնությանը, որը էնհարմոնիկորեն հավասար է նախորդ տրոնայնության բնական դոմինանտային: Սակայն 6-րդ աստիճանի ակկորդից հետո *as-moll* տրոնայնությունն ընկալվում է որպես վարընթաց կիսարունային շարժում:

Նադիրի գայրույթը, որը թափվում է սուրհանդակի գլխին, երկարատև չէ, և դա արտահայտվում է նրա երգաբաժնի հաջորդ հարվածում, որտեղ նա խորհուրդ է հարցնում Շեյխից, թե ինչպես հաղթի Թաքուլին: Նադիր Շահի երգաբաժնի այս հարվածում պետք է արտահայտվի տարակուսանք և անվարահություն: Նա գիտի, որ պայքարում դեմ առ դեմ Թաքուլին հնարավոր չէ հաղթել, ուստի այլ միջոց է փնտրում: Այլ կերպ ասած՝ տրամադրության

Օպերային արվեստ

այդքան արագ փոփոխությունը նշանակում է, որ նախկինում նույնպես նա վարած էր Թաթուլի անպարտելիությունը, իսկ նրա գոռոզությունը գործի ներկայությանը ընդամենը խաղ է, որն անհրաժեշտ է զինվորների մարտական ոգին բարձրացնելու համար: Հենց այս հատվածում է ունկնդրի գիրակցության մեջ վերջնականորեն ձևավորվում Նադիրի կերպարը, որը ոչ միայն Թաթուլ իշխանի ոխերիմ թշնամին է, այլև պարծենկոտ, կեղծարար անձնավորություն:

Հնչում է շեյխի քաղցր խոսքը, որում նա Նադիր Շահին խորհուրդ է տալիս կիրառել կաշառելու մեթոդը և երջանկության ու հարստության խոստումներով դավաճանության դրոշմը Թաթուլ իշխանի կնոջը: Այս հատվածը լի է արևելյան բանաստեղծականությամբ: Շեյխը գայթակղության ձևերի մասին է հուշում, որոնք կարող են Թաթուլի զգուշավորությունը սասանել և այդ դեպքում հնարավոր կլինի անսպասելիորեն գրավել բերդը:

Նադիր Շահի ու Շեյխի երկխոսության մեջ փոխհարաբերության նոր որակ է հայտնվում: Խորամանկ Շեյխի համոզող չափը համակցվում է Նադիր Շահի հիացական երախարապարտությանը: Վերջինս հիանում է Շեյխի խորամանկությամբ, և նրան չի կանգնեցնում նաև այն հանգամանքը, որ դավաճանության շնորհիվ ձեռք բերված հաղթանակը ոչ միայն անբարոյական արարք է, այլև սրտորթյան բացահայտ դրսևորում: Բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում, այդ թվում նաև Արևելքում, զինվորների քաջությունը գնահատվել է ազնիվ մարտի սկզբունքով: Իսկ դավաճանությունը միշտ եղել է խայրառականության հոմանիշ: Հենց այս զուգերգում է, որ կարարողները պետք է անկեղծորեն արտահայտեն այն զգացումները, որոնք առկա են րեքսրում:

Շեյխի հեռանալուց հետո Նադիր Շահի վերջին ֆրազները ներկայանում են որպես նրա բարոյական կերպարի բնութագիր: Սակայն Նադիր Շահը վարած է, որ ինքը ճշմարտացի է:

«Ալմաստ» օպերայի երկրորդ գործողությունը, ծավալուն նվագախմբային նախանվագը՝ լարայինների ֆակտուրայում նրբագեղ զարդարանքներով և «կորասակովյան» խրոմատիկ սեկվենցիաներով քնարական բնույթ ունի: Ալմաստի և նրա մրերմուհու՝ Գայանեի հակիրճ երկխոսությանը նախապարտապարտող տեսարանը նույնպես դրամատուրգիական նշանակություն ունի: Տեղի ունեցած իրավիճակում «ներխուժում է» միանգամայն այլ կերպարայնություն: Ալմաստի և Գայանեի երկխոսությունից հետևում է, որ վերջինս լսել է Ալմաստի խոսքերը, որոնք նա ասել է քնած ժամանակ: Գայանեն տեղեկացել է Ալմաստի գաղտնիքը:

Ալմաստը տանջվում է կասկածների և վաղ կանխագագացումից: «Նայիր, հանգչող արևն արևոտ է, երկինքն էլ է կարծես կովում» բառերում արտացոլվում է սարսափելի իրադարձությունների

կանխագուշակումը: Նրա հոգին խռովվում է երկրորդական առջև մի կողմից սպանվելու վախն է, մյուս կողմից աշուղի առաջարկած գայթակղությունը, որը նրան Նադիր Շահի պալատում շքեղ կյանք էր խոստանում: Գայանեի պարասխանի մեջ արտահայտվում է հավատարմության խոստովանությունը և երդումը: Նա հոգեբանորեն հենց այդ պարզառով էլ մրերիմ է տիրուհու հետ, քանի որ սրբկորեն կապված է նրան:

Սակայն գլխավորն այն է, որ կոմպոզիտորը մեներգի ընթացքում ունկնդրին հնարավորություն է տալիս գիրակցելու Ալմաստի հոգեվիճակը: Այդ պարզառով Գայանեի սրբկամությունը պետք է այլ կերպ հնչեցնել: Մենք առաջարկում ենք կիսաերգեցողություն – կիսադեկլամացիա, ինչն էական դրամատուրգիական արդյունք կտրանար:

Ինչպես նրբորեն նկատել է Գ. Գ. Տիգրանյանը իր նշված հեղափոխության մեջ, երկու առանցքային նշանակություն ունեցող բառերը՝ գայթակղություն «Լոիր» և չարագույժ շշուկով վերարտադրվող «Կսպանեմ» խոսքերը, որոնք հնչում են անկայուն և լարված հարմոնիկ հենքի ֆոնի վրա էպիգոդի դրամատիկա կուրակումն է: Հարկանշական է, որ այս խոսքերի իմաստային բովանդակությունը հակադարձ համեմատական է դրանց կարարման մոտեցմանը: «Լոիր» բառը՝ լռելու կոչը, արտահայտելու բնականորեն պետք է լուռ արտաբերվի, իսկ «Կսպանեմ» ուղղակի սպառնալիքը, ընդհակառակը, որպես ուժգին ճիշ: Սակայն կարարման մեթոդների տեղերը միմյանց հետ փոխելով՝ Ա. Ա. Սպենդիարյանն էլ ավելի մեծ դրամատուրգիական արդյունքի է հասել: Խոսքի իմաստի և նրա վերարտադրման մեթոդի միջև հակասությունը տվյալ համատեքստում ընդգծել է դրանց դրամատուրգիական նշանակությունը:

Հաջորդ էպիգոդում (N 19, 2. էջ 247) ճակատամարտի չափերի ֆոնով Ալմաստի և Գայանեի միջև տեղի է ունենում մեկ այլ երկխոսություն՝ այս անգամ երգեցողությամբ: Այժմ ակնհայտ է, որ Գայանեի դերերգը օպերայի գործող անձանց այս զուգում դրամատուրգիապես Ալմաստից անբաժանելի է: Դա Ալմաստի ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր արտացոլումն է:

Բոլոր դուետները կառուցված են միևնույն սկզբունքով: Դա հարց ու պատասխանի ու հաստատումի համակարգ է, որոնք փոխանցում են Ալմաստի ներքին հոգեկան պայքարը: Այս երևույթը որոշակի իմաստով կարելի է մեկնաբանել որպես Ալմաստի մենախոսություն, որը պարզապես արտահայտվում է մրերմուհու հետ երկխոսության ձևով: Ավելին, Ալմաստի մրքերը ծածուկ են, դրանք չի կարելի բարձրաչափել, և Ալմաստի ու Գայանեի երկխոսությունում անխուսափելիորեն նշանակվում է Ալմաստի անձնավորության երկարումը: Այս երկխոսության մեջ այդ հանգամանքը բացարձակապես ակնհայտ է:

Մեր կարծիքով, դրամատուրգիական կառուց-

* Սա ընդամենը մեր տեսակետն է և մենք դա չենք պնդում և պահանջում որպես կատարողական պարտադիր մոտեցում: Շարադրվածին պետք է վերաբերվել որպես առաջարկ:

վածքի մեր առաջարկած փարբերակում* «Ալմաստ – Գայանե» երևույթը պետք է օժտված լինի որոշակի որակական հատկանիշներով: Նախ, եթե հետևենք դրամատուրգի փրամաբանությանը, ապա Գայանեն Ալմաստի արտացոլումն է, նրա փոքր-ինչ ավելի «խամրած» ես-ը, այդ պարզապես պետք է դերակատարին ընդհանրապես, ով նման է գլխավոր հերոսուհուն, վերջինիս նկարելիորեն զիջում է վառ կերպարայնությանը, միաժամանակ, նրան նման է արտաքին հատկանիշներով: Նրա չայնային փայլերը նույնպես պետք է տեսնել փրամաբանության համակարգի մեջ, որը գլխավոր հերոսուհուն է պետք է զիջեն հնչեղության ուժգնության իմաստով, իսկ երգեցողության մաներայի մեջ պետք է լինի իշխանություն նմանակելու երանգ:

Երկրորդ հատկանիշը հետևյալն է: Գունդներում պետք է միմյանցից առանձնացնել իմաստային դարձվածքաբանական փոխանցները և վոկալ արտահայտչամիջոցներով սրեղծել իմաստային ընդհանրության փայլունություն:

Օրինակ. Ալմաստ. «Ի՛նչ ուժ, ի՛նչ հաղթ կեցվածք ... ինչպե՛ս կարող եմ նրան մատնել» Գայանե. «Դաշտից փախավ պարսից բանակը»:

Մյուս հաջորդում են երգչախմբի մեկնաբանությունները, և նրանք փախչում են: Այս իմաստային հատվածում պարունակվում է հետևյալ միտքը. ի՛նչ ընդհանրապես, սե՛րն իշխանի նկարմամբ, թե՛ դավաճանությունը: Գայանեն լրացնում է միտքը՝ վերադառնալով իշխանական հաղթանակով հիանալու մտքին: Ըստ էության, սա Ալմաստի միտքն է, որն արտաբերվում է Գայանեի շուրթերից: Իշխանի մտքի վրա հնչում է գալարափողի նվագաբաժնում, որպես այդ հիացմունքի ապացույց, իսկ այն հանգամանքը, որ այդ մտքի վրա հնչում է պարսկական քայլերգի ներքո, բացատրում է իրավիճակն այն առումով, որ մենամարտում Թաթուրը հաղթանակ կրանի:

Վերջապես, պարսկական չիերի դոպրոնն աստիճանաբար հեռանում է, և Ալմաստն առաջին անգամ միայնակ, առանց Գայանեի, մենախոսություն և արիտոք է կատարում: Գայանեն կամ հեռացել է բեմից, կամ սրվերում է մնացել*:

Ա.Ա.Սպենդիարյանը, մեծ դրամատուրգ է: Եթե նախկինում Ալմաստի կասկածներն ու այդ առնչությունը փրամաբանությանը փրեդաբաշխված էին իշխանուհու և նրա մտերմուհու երգաբաժնիներում, ապա այժմ հերոսուհու բոլոր մտքերն ու զգացմունքները կենդանացած են մեներգերում: Դրամատուրգի փրամաբանության, սա երևույթի կոնկրետիզացման փայլուն նմուշ է: Այսպես, այժմ Ալմաստի գիրակցությունը դավաճանության որոշում կայացնելուն մոտ է: Թեև այն դեռևս ուղղակիորեն չի դրսևորվել, սակայն արդեն միջնորդավորված նկարելի է. «Մի պահ կովով տարվեց հոգիս»: Արդեն այս ֆրագում առկա են դավաճանության նշանները: Ալմաստը չի ողբում զոհված հայրենակիցների մահը, այլ մտորում է միայն մարտի փրամաբանի շուրջ: Դրամա-

տուրգիական կարևոր հանգամանք է Ալմաստի փրեդաբաշխումը: Նա այն փրեդաբաշխում է իր ճակատագրի ապագա: Այսպես, Թաթուրի հետ միասին սպանվելու վախն է եկեղծարարը: Բացի այդ, Համբարձումյան փրամաբանության պարկերը և վիճակահանության ավանդական խաղը ողբերգական ճակատագրի են բերել նրան, սարսափով է հնչում վիճակահանության երգը՝ «Չանգոյությունը»:

Ալմաստի արիտոքն կարծես հիշարարի երգի փրեդաբաշխական չե ունի, որպեսզի մայրը ողբում է մահացած աղջկա կորուստը: Երգչախմբի հետ փրեդաբաշխում արտացոլվում է ժողովրդական թաղման արարողության պարկերը:

Երգչախումբը ամբողջ ընթացքում վերադառնում է «Էսոր նոր ա» ժողովրդական երգի ֆրագումներին: Տոնայնությունը՝ փրեդաբաշխում, ընդգծում է թախիծը: Մակայն այդ վիշտը ոչ թե հասցեագրված է ինչ-որ մեկին, այլ պարկերվում է գալիք կյանքի ֆրեդաբաշխում: Այսպես էլ կայանում է օպերայի այս էպիզոդի փրեդաբաշխական մեկնաբանությունը: Իսկ այն հանգամանքը, որ Ալմաստը բեմում միայնակ է, պետք է ավելի ցայտուն դարձնի այդ ազդեցությունը:

Մակայն, Գայանեի վերադարձը ունկնդրին կրկին փրեդաբաշխում է նրա բովանդակային երկրորդ կողմին. «Կյանքը քաղցր է դեռ այնպես»:

Գայանեն՝ Ալմաստի երկրորդ ես-ը, ընդդիմանում է նրա փրեդաբաշխում: Նա փրեդաբաշխում մոտ գուշակուհի է բերում, ինչը նկարելիորեն աշխուժացնում է Ալմաստի հոգեվիճակը:

Միանգամայն ակնհայտ է, որ Ալմաստի արիտոքն և Գայանեի հետ փրեդաբաշխում դրամատուրգիապես ընդհանուր միավոր են: Այս էպիզոդի կատարման ժամանակ կարող է հակադրվել պետք է իրականացվի: Արիտոքում Ալմաստի փրեդաբաշխում և «արտասուքով» լի չայնը պետք է կարող փրեդաբաշխում գրեհիկ և սարսուռով լի բացակասությունը. «Սև՞ է, սասցիք, պայծառ չե՞, միգուցե գարիդ խաբո՞ւմ է»:

Այս ֆրագում լավագույնս բնորոշում է Ալմաստի փրեդաբաշխական կերպարի փրեդաբաշխությունը: Այս ֆրագում պետք է կատարվի կոպիտ, անհոգի և պետք է առաջին անգամ ներկայացման մեջ բացահայտի հերոսուհու հոգու սրվերային կողմը:

Գուշակի կանխագուշակումը, որը զարու հատկանիշների մեջ փրեդաբաշխում է սև և պայծառ ճանապարհ, միայն ուժգնացնում է Ալմաստի հոգու խռովքը:

Ալմաստի այս ֆրագում, որը դրվել է գուշակի երգաբաժնի մեջ, վկայում է հոգու երկակի վիճակի մասին. «Խավար է սև չորս կողմն անծայր», սակայն այսպես է հնչում Ալմաստի ֆրագում, որը և եզրափակում է գուշակի հետ առնչվող հատվածը: Այն հնչում է բով և, մեր կարծիքով, պետք է հարցական նշանով ավարտվի: Դա ակնհայտորեն դրսևորվում է նաև ֆրագում ավարտի հարցական բնույթի մեջ.

Երաժշտական խմբի 3(38)2010

* Այս առնչությամբ պարտիտուրայում նշում չկա: Մեր կարծիքով, Գայանեն պետք է մի որոշ ժամանակով բեմից հեռանա և վերադառնա արիտոքի ավարտին:

Օպերային արվեստ

Օրինակ 4



Տեքստում նշված *p*-ով, *diminuendo*-ի հետ միասին հնարավոր չէ երգել բացակասության նշանով, ինչպես դա նշված է բանաստեղծական տեքստում: Եվ նաև իմաստային տրամաբանությամբ, հարցական երանգն այստեղ համակցվում է զարմանքին: Այնուամենայնիվ զարմանում է այդ հոգեվիճակի գիտակցությունից:

Այնուամենայնիվ այս ֆրազը տվյալ գործողության մեջ սահմանային դիրք ունի, նրանից հետո՝ մինչև գործողության ավարտը, եթե անտեսենք Գայանեի ռեպլիկները, որոնք միայն ընդգծում են Այնուամենայնիվ հոգու խռովքը, սակ է կացվում Նադիր Շահի անունից իշխանուհուն աշուղի գայթակղելու տեսարանը:

Այս տեսարանն ամենից ավելի դիմամիկն է տվյալ գործողության մեջ և անգամ օպերայի սկզբից սկսած, ընդ որում դիմամիկ է հենց դրամատուրգիայի առումով, դրամատուրգիայի գազաթևակերն է հանդիսանում, քանի որ նրանում վերջնականորեն ավարտվում է հերոսուհու հոգու բացասական կերպարի տեսքը: Այստեղ է Այնուամենայնիվ Նադիր Շահի գահի և հարստության խոստումներին: Նադիր Շահն արքունական աշուղին նենգաբար նպատակամիտված ուղարկել է բերդ՝ իմանալով, որ աշուղին առանց խոչընդոտների թույլ կտան ամբողջ ներս մտնել:

Եվ այս կենտրոնական տեսարանի մեջ, Ա.Ա.Սպենդիարյանը դիմում է եռամաս կառուցվածքին: Տեսարանի առաջին մասում Այնուամենայնիվ ընդդիմանում է աշուղի գայթակղման, երկրորդ տեսարանը աշուղի երգեցողությունն է, որտեղ նա Նադիր Շահի անունից գահ և հարստություն է խոստանում, և վերջապես, 3-րդ մասում հերոսուհին գրեթե որոշում է դիմել դավաճանության:

Առաջին մասը հագեցած է դրամատիզմով, դիմամիկայով: Հերոսուհու հոգեբանական երկարումը հասել է գագաթնակետին: Այնուամենայնիվ ընդդիմանում է աշուղի գայթակղմանը, նա դեռևս սիրում է իշխանին: Գայանեին՝ իր երկրորդ ես-ին դիմելով նա պատմում է. «Իմ լավ իշխան... ողջ հոգիս հուզվում է խոր, երբ նա կրծքիս հոգնած փարվում է՝ այնքան վստահ ու բախտավոր», սակայն Գայանեն լռում է, և Այնուամենայնիվ նրա լռությունից վստահում է: Այդ լռության մեջ կա անհայտության, զաղպուղի սարսափազդու ուժ. «կարծես հիմա ամեն վայրկյան հանկարծ բացվել կարող է դուռը անհայտ ուժով՝ կամաց այնքան»... Այստեղ դուռն իսկապես բացվում է, և շեմին լուռ հայտնվում է աշուղը՝ քամանչան չեռքին: Մինչև այս պահը Այնուամենայնիվ երգեցողությունը պետք է գնալով ավելի ու ավելի նյարդային դառնա, սակայն աշուղի հայտնվելուց հետո այն պետք է վերածվի ջղաձիգ երգեցողության, որը կհստվ չափ ճիչ է. «Այդ ո՞վ թողեց նրան այստեղ»:

Նվագախմբում լարվածությունն աճում է համապատասխան երգաբաժնի լարվածության: Ա-

մաստի նյարդային ճիչերի ֆոնի վրա աշուղն անխոս սկսում է իր նվագը:

Գործը հասնում է անգամ աշուղին վիրավորանքներ հասցնելուն. «դու թշվառ մի ճորտ ես»: Նվագը շարունակվում է, և քամանչայի հնչյունները կորրում են Այնուամենայնիվ կամքը. «Ա՛խ, ո՛չ... Երգի՛ր... պետք չէ, խնդրում եմ... Օ, երգը ի՛նչ անհուն բերկրանք է», և գրեթե շշուկով շարունակում է. «Աշուղ, աշուղ, ինչ մի տանջիր»:

Չղաձիգ երգեցողության կուրակման այս բեկումնային պահը փոխարինվում է որոշ զգացմունքայնությամբ: Այնուամենայնիվ բան է ասում, բայց այլ բան է զգում, նա չի կարող դիմակայել քաղցրահունչ երգչի գայթակղությանը, և աշուղի երգեցողությունը ավարտվում է հենց այդ բեկումով:

Այնուամենայնիվ դերակատարի համար սա կատարողական իմաստով օպերայի ամենաբովանալի պահերից մեկն է: Չայնի մեջ կատարողական պահից ակնբարբային անցումը դեպի բացարձակապես երաժշտական – բանաստեղծական, քնարական գեղագիտություն՝ ծայր սարհանս դժվար է թե՛ տեխնիկական առումով, թե՛ լարվածության տեսանկյունից: Բանն այն է, որ քնարական էպիզոդը երգվում է *mf* և *f*, ինչը դժվարություն է ստեղծում դիմամիկորեն հակադրվող կերպարների վերաբերման գործում: Այդ պարմառով, քնարական գեղումով հագեցած հարվածում պետք է պաթոսային, նաև սպորտոգային երգեցողության տարրեր լինեն, քանի որ սա լարվածության կուրակման ամբողջ նախորդ ալիքի գագաթնակետն է:

Աշուղական երգեցողության քաղցրահունչ բնույթը, որին նվագակցում է առաջին ջութակների նվագաբաժինը, նկարագրում է իշխանուհու Այնուամենայնիվ առջև պարսից շահի պալատի գայթակղիչ հրապուրանքը, իսկ գահի ու հարստության խոստումները Այնուամենայնիվ բերում են համաշխարհային դրամա:

Էպիզոդի երրորդ մասն սկսվում է նվագախմբային նախաբանով, որը նախապարտաբար է Այնուամենայնիվ կենտրոնական հանդիսացող ֆրազը. «Օ, քա՛ղը... Գա՛ղը... Գանձե՛րը... Փա՛ռը...»:

«Գերեց ինձ քաղցր մի պատրանք», սիսա ավելի բարձր դիրքի երազանքը, որը մթազնել է մնացած ամեն ինչ: Թեև Այնուամենայնիվ գիտակցում է աշուղի ազդեցությունն իր հոգու վրա, սակայն նա իրեն արդեն պարկեղանում է Պարսկաստանի թագուհի:

Երգչուհին այս հարվածը պետք է երգի՝ փոխանցելով համաշխարհային դրամայի իր վիճակը և զգացմունքներն այնպես, ինչպես ավարտվել էր աշուղի երգից առաջ մասնավոր կուլմիևացիայի վերելքի ալիքը: Դա դրամատուրգիական կապ է, և նրա մեջ առկա է տեսարանի բոլոր բաժինների շրջանակում տարրը: Ամբողջ տեսարանում աշուղի երգը անցողիկ է, իսկ Այնուամենայնիվ հոգեբանական վիճակը աշուղի երգից առաջ և հետո նույնը չէ: Այստեղ երգչուհու շար բան է կախված՝ տեսարանի դրամատուրգիական ամբողջականությունը ստեղծելու համար:

Հակիրճ և դրամատիկական նվագախմբային ինտերմեդիայից հետո, դիտմանն ակորդների հն-

Երգչուհու կողմից 3(38)2010

չողությունն վրա րեղի է ունենում զոչունի ոչ մեծ պոռթկումը, որը դիրարկվում է որպես Ալմաստի նախկին՝ ամուսնուն հավատարմի կերպարի նոր դրսևորում, սակայն Ալմաստի երկրորդ եւ-ը՝ Գայանեն, վերադարձնում է հերոսուհու նոր եւ-ը. «Հիմա աշուղը կզնա, բայց նա կապրի քո հուշերի մեջ»:

«Ալմաստ» օպերայի երրորդ գործողությունը:

«Ալմաստ» օպերան ծրագրային կառուցվածք ունի, ինչպես նաև օժտված է կենտրոնացման ավելի մեծ մակարդակով: Այսպես ամբողջ նյութը հարակի և փրամաքանորեն կենտրոնացված է առանցքային գծի՝ Ալմաստի դերերգի շուրջ:

Նույնիսկ օպերայի գործողության կարևոր գործող անշանց այլ դերերգերը համեմատաբար ավելի պակաս նշանակալի են: Ըստ էության, միայն Ալմաստն է կենտրոնական գործող միակ անշնը, նրա աստիճանաբար կերպարանափոխվող հոգեվիճակն էլ հանդիսանում է օպերայի բովանդակության գլխավոր դրամատուրգիական գիծը: Իսկ մնացած հերոսները, անգամ Նադիր Շահը և Թաթուլ իշխանը, երկրորդական գործող անշինք են: Նրանց հակասությունը հանդիսանում է հոգեբանական կերպարափոխումների ազդեցության հանգամանք: Իսկ գլխավորն այն է, որ դա ողբերգության պարճառ է, որի արմարները գալիս են օպերայի գլխավոր հերոսուհու հոգեբանության բնույթից: Ալմաստն ի սկզբանե հակված է փառքի ու հարստության, և այուժեի զարգացման ընթացքում այդ երևույթը փոխադրվում է հոգեբանական այլ վիճակում, որտեղ նա ամեն զնով, անգամ դավաճանությանը պարտապար է հասնել իշխանության: Այս ցանկությունը քողարկում է հոգու դրական այլ որակներ, որոնք օպերայի սկզբում առկա էին իշխանուհու կերպարում:

Ներկայացման այս փարքերակում դրամատուրգիայի առանցքը հայ ժողովրդի պայքարն է նվաճողների դեմ, իսկ Ալմաստի կերպարի զարգացումը աղավաղված է և ներկայացված միայն որպես հայերի պարտության պարճառ: Իրականում, Ա.Ա.Սպենդիարյանի մրահղացումը շարավելի խորը նպատակներ ուներ: Նա ենթադրում էր բացահայտել դավաճանության էությունն ու բնույթը որպես երևույթ, որը հայ ժողովրդի ողբերգական պարտության մեջ թեև փարքեր, բայց առիթով դարձել է ռազմական և քաղաքական պարտությունների պարճառ:

Ա.Ա.Սպենդիարյանը օպերային փառանդավոր դրամատուրգ է: Ըստ էության, երրորդ գործողությունը ոչ միայն օպերային գործողության զարգացման բարձրագույն և մոտ է, այլև դրամատուրգիայի իսկական գլուխգործոց՝ օպերային ֆաբուլայի դրամատիկական լարվածության դի-

նամիկ աճի զարգացման ընթացքի մեջ արտահայտչամիջոցները ճշգրիտ րեդաքաշիելու իմաստով:

Հերկենք զարգացման այդ հաջորդականությունը Ալմաստի երգաբաժնում, քանի որ հենց նա է բովանդակության և օպերային գործողության զարգացման մեջ առանցքային դեր ունեցող կերպարը:

Թաթուլի և նրա գորքի հաղթանակի պատվին սկսված խնջույքը կոմպոզիտորն իրականացրել է ընդգծված պերճաշուր րեսարանով: Գ.Գ.Տիգրանովը արդարացիորեն 3-րդ գործողության նախանվագը բնորոշել է որպես «ինքնաարիպ սկերցո» (1. էջ 324). երաժշտական ձև, որն իր մեջ ներառում է և՛ ուրախություն, և՛ հանդիսավորություն: Կերպարային այդ երկու հասկացություններն էլ հանդիսության բաղադրիչներ են: Այսպիսով՝ սկերցոն Թաթուլի խնջույքին րիրող մթնոլորտը մարմնավորելու ամենից ավելի խելամիտ ձևն է: Նկատենք, որ Ա.Ա.Սպենդիարյանը երրորդ գործողության մեջ նույնությամբ հերկել է քարոնի դասական կանոններին այն առումով, որ գործողությունը րեղի է ունենում նույն րեղում և ժամանակում, իսկ գործողության սկիզբն ու ավարտն իրենց իմաստային նշանակությանը հակադիր են: Այն, ինչ սկսվել է րոնական խնջույքով, նվաճողների դեմ րարած հաղթանակի հանդիսությամբ, գործողության ավարտին վերածվում է պարտության, ողբերգության, հերոսների մահվան: Եվ դա րեղի է ունենում գլխավոր հերոսուհու, Թաթուլի կնջո՝ Ալմաստի դավաճանության պարճառով:

Խնջույքի ամենաթեժ պահը նրա ամենադրամատիկական գագաթնակետն է, այն պահը, երբ Թաթուլը դիմելով հյուրերին առաջարկում է հիշել մարտում զոհված հերոսներին:

Այս հարվածին նախորդող վշտայի խմբերգը և Թաթուլի խոսքը հակադրվում են դրան նախորդող երկարաարև ուրախությանը: Նվագախմբում **f -moll** ակկորդի չգզվող մարումից հետո մեծ դադարը և լռությունն ընդհարվում են Ալմաստի բուռն, զգացմունքային շայնով, որը խախտում է այդ լռությունը և բարոյապես ոչ ճիշտ պահվածքով՝ հյուրերին կոչով հրավիրում շարունակել ուրախությունը (N 25) (3. էջ 81):

Ա.Ա.Սպենդիարյանը յուրահարուկ է ընրրել Ալմաստի երգաբաժինը գործողության մեջ ընդգրկելու պահը: Արդեն այդ անբնական ուրախ հուզական պոռթկումը, որտեղ երգուհու շայնի մեջ նկատելիորեն դրսևորվում է նյարդայնությունը, ելակետ է հանդիսանում Ալմաստի կերպարի հերպազա զարգացման համար: Երգչախումբն անմիջապես արձագանքում է Ալմաստի կոչին, որն ուրախ ներգրավում է խնջույքի բոլոր ներկաներին: Սակայն դախիճից արդեն նկատելի է Ալմաստի և գործողության մնացած մասնակիցների

Երաժշտական ԴԱՅԱՍՏԱՆ 3(38)2010

Օպերային արվեստ

երգաբաժինների միջև շերտավորումը: Այնաստիակ նեպոլիտների ինտրոնացիաներում, *f-moll* – ից դեպի *dis* լոկրիական լատի նմանվող կառույց մոդուլյացիայում, որտեղ երկրորդ աստիճանը (*e*) հանդես է գալիս որպես «սահող» փոնիկա, և առաջին աստիճանի գերօկտավայնության մեջ (*dis-d*), հարակ դրսևորվում են անբնական խաղի, կեղծավորության նշաններ:

Սակայն, խնջույքը շարունակվում է, հնչում են ֆանֆարները, գազաբնակեպի են հասնում նվագախմբային և խմբերգային երգաբաժինների արտահայտչականությունը. նվագախմբի դինամիկան փակնում է դեպի *tutti* (N 28, 29).

Այնաստիակ լցնում է Թաթուլի բաժակը. «Ուրիշ խորհուրդ ունի վերջին գավաթը, իմ տիրակալ, խմիր այս քասն էլ, առ»: Այնաստիակ հրճվանք և հնազանդություն է դրսևորում իր ամուսնու նկատմամբ: Սակայն պարզ է, որ սա Այնաստիակ շեռնարկումների սկզբն է:

Այստեղ, Այնաստիակ դերակատարը պետք է չափազանցված ցուցադրի իր հնազանդությունը, շայնի մեջ պետք է հնչի քծնանքի և կեղծ մեծարանքի ինտրոնացիան: Այս ամենը պետք է դրսևորվի նաև շարժումներում՝ ավելորդ խոնարհման մեջ, հայացքներում և այլն: Երգչուհին պետք է առավելագույնս դրսևորի դերասանական օժտվածություն, որպեսզի պահպանի չափը: Այնաստիակ կեղծավորությունը պետք է աղաղակող չլինի, այլ հազիվ նկատելի:

Թաթուլի սերն իր կնոջ նկատմամբ այնքան խորն է, որ նա չի նկատում կեղծավորությունը: Այնաստիակ փրվող նրա պարասիսանն ընթանում է շքեղ *Ges-dur* փոնայնությունում և բարիփոնի համար շար բարձր ռեգիստրում (N 31) (3. էջ 104):

Այնաստիակ ակնթարթորեն պարասիսանում է Թաթուլին. «Ուազմի դաշտում անգամ քեզ խորք էր ահը, Այնաստն ինչպե՞ս դարձավ ահեղ, քան՝ շահը»:

Երաժշտական խորհրդանիշը ունկնդրին «հուշում է», որ Այնաստիակ դավաճանության միտքն ավելի է հասունանում և հերզհերտ ավելի ուժեղ է պարտություն նրան:

Այնաստիակ դերակատարուհին պետք է օժտված լինի շայնի հարուստ, նուրբ նյութանուններով: Այստեղ անհրաժեշտ է ոչ միայն երգել, այլև դերը խաղալ, որպես դրամատիկ դերասանուհի: Մեր կարծիքով, այս ֆրագը պետք է երգվի խաղային դեկլամացիոն էֆեկտի օգնությամբ, սակայն այս դեպքում ևս չափի զգացողությունը չպետք է հասնի գոնեկության, քանի որ Թաթուլի աչքին Այնաստիակ հավատարիմ, սիրող և չքնադ կին է:

Այնաստիակ երգաբաժնի շարունակության մեջ

(N 32) (3. էջ 107) հյուրերին առաջարկվում է գազաբնակեպը լցնել: Այն պետք է երգվի նույն ոգևորությամբ և նույն երանգով: Լադը էլ ավելի է աղաղակող իջեցումներով: Այս անգամ իջեցվում է մաժորի 3-րդ աստիճանը դեպի միևնուր, թեև մաժորն այս պահին արդեն հարակ չի ընկալվում: Իսկ փոնիկան փոխարինվում է *es-ով*, որը զուգահեռ միևնուրի փոնիկան է:

N 34-ում (3. էջ 114) Այնաստիակ շողորնորթությամբ* Թաթուլին հարց է փալիս. «Ո՞վ է հսկում բերդը մութ ժամին այս»: Թաթուլը քվարկում է իր «քաջերի» անունները: Այնաստիակ շայնը կարծես զգուշ է: Այստեղ խնջույք է, իսկ եթե հանկարծ թշնամին հարձակվի՞: Իրականում սա ծրագրի մի մասն է: Անվրանգության առնչությամբ հոգապարտության փակ քաքնված է ցանկությունը՝ պարզելու, թե ով է պաշտպանում բերդը: Այս ֆրագը նույնպես կարևոր է, իսկ հարցի մեջ շողորնորթության բնույթը պետք է փնտրել խոսքին մոտեցող ինտրոնացիաներում, առավել ևս, որ մեղեդային գրաֆիկան ճշգրտորեն հետևում է խոսակցական ինտրոնացիաներին: Թավջութակների նվագաբաժնում վարընթաց քայլերը հավասարակշռություն են ստեղծում Այնաստիակ այդ ֆրագի ինտրոնացիոն ցաք ու ցրիվ բնույթի հետ:

Թաթուլն արդեն որոշ չափով արբել է և չի նկատում խարդավանքը Այնաստիակ հետևյալ խոսքերում. «Այստեղ անհոգ խնջույք է, հրճվանք է, երգ, այնտեղ՝ խավար գիշեր... Խղճում եմ նրանց... Գինի տարեք իսկույն»:

Հավանաբար, գործողության այս մասը կապարտական առումով ամենից ավելի դժվար է: Այնաստիակ հարգանքի զգացմունք է ցուցաբերում նրանց նկատմամբ, ովքեր պաշտպանում են: Չայնի մեջ պետք է պաթոս լինի, որը, միաժամանակ, և՛ նրանց հերոսական կերպարի նկատմամբ և խոնարհում է արտահայտում, և՛ կեղծավորություն: Ավելի շուր սա կարելի է իրագործել՝ չափազանցելով կերպարայնության առանձին փարրերը: Օրինակ, «Խղճում եմ նրանց» խոսքերում պետք է պարունակվի ավելորդ խղճահարություն, այնքան, որպեսզի հնարավոր լինի կասկածել անկեղծությանը: Իսկ Այնաստիակ վերջին խոսքերը՝ «Խնջույքն անպար թվում է քամանչա անլար», որոնք երգչախումբը կրկնում է, որպես կապակ, պետք է հնչեն թեթև հեզանքի հարկանիշներով: Տվյալ համարեքարում քամանչան նույնացվում է աշուղի կերպարին, իսկ Այնաստիակ շուրքերից փվյալ գործողության մեջ արդեն երկրորդ անգամ քաքնված սպառնալիքի խոսքեր են հնչում: Սպառնալիքը խորհրդանշական է, սակայն՝ բացահայտ: Պարասիսական չէ, որ կոնպոզիտորն ավելի ուժգին է դարձրել այդ արտահայտությունը՝ երգչախմբում փենտրոնների խմբագիտությամբ:

* Այդպես նշված է պարտիտուրում:

Գա ունկնդրին և հանդիսատեսին հասցեագրված դրամատուրգիական խորհրդանիշ է առ այն, որ Նադիր Շահի ծրագիրն իրականացվում է Ալմաստի գործողությունների մեջ:

Ալմաստը ոչ միայն մասնակցում է գործողություններին, այլև կազմակերպում է դրանք: Պարելու նրա կոչից հետո անմիջապես սկսվում է աղջիկների պարը, որը անհոգ և արքեցած Ռուբենի ուշադրությունն է գրավում իր վրա, սպա՝ փրամարդկանց պարը, որը նույնպես պարկերում է խնջույքի զարգացող պարկերը: Թաթուլը հիանում է իր կորիճներով, Ռուբենը շարունակում է իմել, Թաթուլը զգնությունը կորցնելով բացակասում է. «Խմենք, լավ քեֆ անենք»:

Խնջույքը վերածվում է գինարբուքի: Ալմաստն անխռով դիտում է տեղի ունեցող անցողիկներին: Ծրագիրը հաջողվում է, մնում է միայն ավարտել այն, իրավիճակը մոլորացրի հասցնել: Սակայն անսպասելիորեն ի հայտ է գալիս զոջումի պահը, որն արտահայտվում է Ալմաստի ու Գայանեի հակիրճ երկխոսության ձևով: Այն դրամատուրգիական շար կարևոր նշանակություն ունի այս միջավայրում:

Ալմաստը հարցնում է. «Բերդն արդյոք գինի տարա՞ն», Գայանեն պատասխանում է. «Յոթ լիքը տիկ, շատ գոհ պիտի լինես դու»: Եվ ահա զոջման գագաթնակետը. «Ա՛խ, տե՛ր Աստված, էլ ուժ չկա... Տանջվո՞ւմ եմ...»: Սակայն նրա երկրորդ եսը՝ Գայանեն, եր է պահում. «Իշխանն է քեզ նայում»:

Այս էպիզոդը թեև հակիրճ, բայց շար դրամատուրգիական է: Ալմաստը, իհարկե, հուզավառ կերպար է օպերայում: Նրա զոջումը երգեցողության մեջ պերք է անկեղծ լինի, չայնի մեջ պերք է հուսահատության, ճնշվածության երանգ պարունակի: Դժվարությունը կայանում է նրանում, որ երգաբաժնի այս հարվածը չի կարելի բարձրաձայն երգել, չէ՞որ իշխանը մոտ է կանգնած: Իսկ Գայանեի չայնը երկաթային է: Ալմաստի երկրորդ եսն ասում է, որ երդարձի ճանապարհ չկա:

Թաթուլն իր տեսանկյունից է գնահատում Ալմաստի ու Գայանեի լուռ ու գաղտնի հուզմունքը և որոշում, որ դա կանացի գաղտնիքների խաղ է: Նրա ֆրագը՝ «Ա՛խ, դուք, կանա՛յք... կարծես իրոք լարում եք ինչ-որ դավ», հնչում է, որպես կատակային նկատողություն: Ալմաստի պատասխան ֆրագը կարծես թե կասեցնող կարակ է. «Տեսնում ես դու կանանց սրտի մեծ խորքը»: Այն հնչում է, որպես բացահայտ հեզնանք: Սա Թաթուլի վիճակի սրուզումն է: Եթե անգամ նրա խոսքերում կասկածի սրվեր կա, սպա դրանք կարակով եր մղելով՝ Ալմաստն իրականում մերկացման սպառնալիքն է եր մղում:

Թաթուլը կանչում է ծաղրածուին: Միջնադարյան ճաշկերույթի տեսարանների այս հնարի

ավանդույթները Ա.Ա.Սպենդիարյանը կիրառել է և՛ տեղին, և՛ դրամատուրգիապես արդարացված: Ուրախության թեժ պահին միայն կարող է ծաղրածուն խնջույքի հյուրերի բորբոքված խմբի ուշադրությունը հրավիրել իր վրա: Ծաղրածուն հեզնական ձևով նմանակում է Նադիր Շահին և անգամ վերջինիս հետ «հանդուգն Թաթուլի» վեճը: Ծաղրածուի շուրթերով արտաբերվող Թաթուլի խոսքերը. «Ջարդված կզան ողջ Իրանն ու Թուրանը», դառնում է նրա երգի ռեֆրենը: Սրանում կա պարծենկոտության որոշ երանգ, չէ՞որ հայերի բերդն է պաշարման մեջ, այլ ոչ թե հակառակը: Ա.Ա.Սպենդիարյանը, ինչպես նաև Հ.Թումանյանը, դրանով ցույց են տալիս խնջույքի մասնակիցների անպարտեհ վարքը: Այնուհետև, երգչախմբի երգաբաժնում կրկնվող ծաղրածուին ուղղված խոսքերը («Հեյ, դու, աբլոր») և գինի խմելու կոչը հասարակում են համընդհանուր գինարբուքը:

Փոքր-ինչ ուշ, նվագախումբը Ալմաստի հոգում ի հայտ եկած հուզումն է արտահայտում: Սա երկմտանքի ու զոջման նոր դրսևորում է: Որոշ ժամանակ Ալմաստն անմնացորդ հանջնվում է սիրո զգացմունքին, նրա մեջ խոսում են ոչ միայն սիրող կնոջ, այլև մայրական քնքշության զգացմունքները. «Նայի՛ր, նա ծիծաղում է, Գայանե, ինչպես իր մոր կրծքին՝ անմեղ զավակը»:

Այստեղ նորից հակիրճ երկխոսություն է: Թաթուլը, նկատելով Ալմաստի հուզումն աչքերում, հարցնում է. «Աչքի՛ս լույս, ինձ ասա՛, այսօր ինչո՞ւ եմ սառն այդքան ձեռքերդ, դու վի՛շտ ունես արդյոք»: Ալմաստի պատասխանն է. «Ոչ, հենց այնպես, եկա քեզ մոտ, տխրում եմ ես առանց քեզ», որը երգվում է անվարտի Թաթուլից հայացքը հեռացնելով: Սակայն Թաթուլը խոսքերն ընկալում է որպես սիրո արտահայտություն: Եվ ահա պատասխանը. «Օ՛, իմ Ալմաստ, իմ լավ ընկեր, քեզ ի՞նչ եղավ: Սարսափ կա քո դեմքին: Դողում ես դու»: Ալմաստի «Կանցնի դա» պատասխանից հետո Թաթուլը հավելում է. «Դու հիվա՞նդ ես»: Եվ որպեսզի խռովքը թաքցնի, Ալմաստն առոյգ բացակասում է. «Տուր ինձ գինի, Թաթուլ»:

Ծար հետաքրքիր է վերջին ֆրագի ինտոնացիան, որն սկսվում է վերևի չայնասահմանում ու սեկունդաներով իջնում վար. Օրինակ. Նվագախմբային հակիրճ ինտերմեդիան Թաթուլի արիտոգոն կապում է դուետի սկզբի հետ: Ալմաստը Թաթուլին առաջարկում է նվաճող դառնալ. «Եվ դարձիր դու արքայից արքա», այնուհետև՝ «Սեր իմ, դու անկեղծ ասա, մի՞թե ինձ վայել չե՞ր քաղը»: Թաթուլի համաձայնության գաղտնի հույսը կարող է կանգնեցնել Ալմաստի դավադրական արարքը: Սակայն այստեղ ուրիշ բան է կարևոր. նա սիրում է Թաթուլին, սակայն նրան ավելի շար

Երաժշտական ԴԱՅԱՍՏԱՆ 3(38)2010

Օպերային արվեստ

գրավում է բազր, անասիման իշխանությունը, որը նրան խոստացել է Նադիր Շահը:

Սակայն Թաթուլն անմիջապես ետ է մղում այդ միտքը. «Աստծո կամքին ես միշտ խոնարհ եմ: Ասել է նա. «Մի գողանա»: Իմ սուրը մայր երկրի սատար է, ես չեմ գերեվարի այլոց աշխարհը, ուրիշ հողի տեր չեմ դառնա»: Մենք բերեցինք հանգուցային դարձվածքները, սակայն ամբողջ երգարածնի ընթացքում Թաթուլի խոսքերը գովերգում են սեփական հարկի խաղաղությունը: Թաթուլն ավարտում է իր երգեցողությունը՝ «Իմ սեր, Ալմաստ» բառերով: Ահա այդպիսին է նրա աշխարհընկալման համակարգը: Եվ թեև երկու երգիչներն էլ բնում պետք է պաթոսով երգեն իրենց երգարածինը, սակայն Ալմաստի պաթոսը, սեփնեթության փարբերով, չափազանցված երևույթ է, իսկ Թաթուլի վարվելակերպը նույնպես հանդիսավոր է, սակայն խոսքը վերաբերում է քնարական հանդիսավորությանը, որը լի է իր հայրենի հողի և իր սիրելի կնոջ նկատմամբ ունեցած սիրով:

Ալմաստի վերջնական որոշումից առաջ է գրվում վերադարձի կորստի պահը: Եթե Թաթուլի պարասիսանից առաջ դեռևս հերոսուհին հույս էր փայփայում, որ փառք և իշխանություն չենք բերելու իր ծրագիրը դրական լուծում կապանա, ապա այժմ ողբերգությունն անխուսափելի է:

Ալմաստի հաջորդ ֆրագները, իսկ ամենակարևորն է՝ նրա առաջին ֆրագը. «Թագավորությունը մերժած արքա», կարարվում են հազիվ զայվող կարադոթյանը, մոլեգին: Բոլորը հարբած են, մնացել է միայն ավարտին հասցնել ծրագրվածը. «Հե՛յ, թմբկահար իմ, դափը զարկ, պիտի պարեն: Թող լա գուռնան էլ, թող ծով դարձնի այսօր հրճվանքն իմ»:

Ալմաստն այլևս ոչ մի բանի համար չի գոչում: Հոգու մեջ դավաճանությունը կարարվել է, իսկ գործողություններում արդեն մտք է իրագործմանը: Նրա չայնում հեզնանքն ու ծաղրը գրեթե անթաքույց են. «Իմ լա՛վ իշխան, խոժոռ ես դու, գինին կարծես լինի արյուն... Կրակոտ սրտի համար երեք օրբան կա՝ Հայոց աշխարհ... Կարմիր գինի... Եվ սեր»:

Թաթուլը, զգալով, որ ինչ-որ բան այն չէ, ասում է. «Ալմա՛ստ... սպասի՛ր... մի հեռանա... Սոսկում եմ... Ես տխրում եմ... Չքնաղ քո տեսքը ինձ թունավորեց»: Սակայն Ալմաստն արդեն անփարբեր է Թաթուլի նկատմամբ: Վերջինս արդեն ոչ հզոր է ոչ էլ՝ վրասկավոր...

«Ալմաստ» օպերայի չորրորդ գործողությունը: Օպերայի վերջին գործողությունն ըստ էության էպիլոգ է: Տեղի է ունեցել այն, ինչ անխուսափելի էր: Ալմաստը, չարանալով ոչ գահ, ոչ փառք, փորձել է Նադիր Շահից վրեժ լուծել, սակայն բռնվել է և մահապարտ եկաթակվել:

Վերջին դուետը Նադիր Շահի և Ալմաստի երկխոսությունն է: Այն որոշակի իմաստով գիջում է օպերայի նախորդ բաժիններին թե՛ դրամատուրգիական զարգացման մեջ ունեցած նշանակությանը, թե՛ երաժշտական նյութի որակով:

Ներկայացնենք, թե մեր առաջադրած դրամատուրգիայի տեսանկյունից ինչպես է պետք կարարել Ալմաստի դերերգը:

Այնհայտ է, որ փոխվել է Ալմաստի երգարածնի ինտոնացիոն կառուցվածքը: Նրա առաջին ֆրագների մեջ դրսևորվող մտքիվը բացահայտորեն ընկալվում է որպես պարսկական. Օրինակ, այնուհետև, իր ճակատագրական սիսալը հասկանալուն զուգընթաց, Ալմաստի վոկալ գծի երաժշտական նյութն ընդհանրապես կորցնում է լադայրոնայնական կողմնորոշումը: Սկզբում պահանջները հանդուգն են, իսկ այնուհետև խունասի են վերածվում: Ահա այս տեսանկյունից է պետք երգել այդ ֆրագը: Նրա ավարտին պետք է վախի զգացումը դրսևորվի, ինչը ցույց կդրու, որ Ալմաստն սկսել է գիտակցել իրողությունը:

Մրան հետևում է Շահի վիրավորական պարսությունը, թե ինքն ինչպես է ընկալվել շեյքան չիուն: Այստեղ բացահայտորեն ծաղր է, գեղեցկուհի Ալմաստը համեմարվում է չիու հետ: Շահին ուղղված Ալմաստի ռեպլիկը պետք է չայնի մեջ դող դրսևորի: Կարադոթյուն և անգործություն պետք է հնչի նրա պարասիսանի մեջ, որպես փորձ է արվում հակադարձ վիրավորանքը հասցնել այժմ արդեն հերոսուհուն արելի դարձած Շահին:

Շահի հաջորդ մենախոսության մեջ ծաղրն էլ ավելի հեզնական է դառնում. «Էլ չուշացնենք սիրո այս առևտուրը, ի՞նչ տամ, որ դու ծախես քո սերը: Այդքա՞նը: Գա՞հ»:

Իր ճակատագրական սիսալի ամբողջ էությունն ընթանալով Ալմաստի համար ավելի բնական կլիներ փոխարեն անարարբերության մեջ ընկղմվել, սակայն նա, ընդհակառակը, վանում Նադիրի սպառնալիքները, այս ռեպլիկում, եթե հիմնվելու լինենք մեր մեկնաբանական սկզբունքներին, ավելի բնական կլիներ որոշակի անհամապարասիսանություն սրեղծել ֆրագների բնույթի և դրանց կարարման միջև: Ֆրագը հարկավոր է երգել կարծես թե զառանցանքի մեջ, կիսաչայն, անգործության գիտակցությանը: Այդպես շար ավելի վառ կդիպվի մեղավոր իշխանուհու կերպարը, որը գիտակցում է, որ այս աշխարհում նրան ներում չկա: Նադիրի թունուր խոսքերից հետո, որպես նա ասում է, որ Ալմաստի պեղը հարենում է, Ալմաստը կարարում է իր վերջին արի-նզոն:

Այս արիոգոն հասարարում է, որ ճիշտ էին մեր առաջարկած մեկնաբանություններն այն

մասին, որ անհրաժեշտ է հիմնովին փոխել օպերայի չորրորդ գործողության բնույթը:

Ա.Ա.Սպենդիարյանը հնչողության դինամիկան նշել է ք:

Արիտզոյի մեղեդային գրաֆիկան ավելի շարունակ է արտահայտիչ խոսքի, քան՝ երգեցողության: Հերոսուհու հուզական վիճակը վերարտադրվում է ոչ թե դինամիկ ուժգնացումների ու անկումների միջոցով, որոնք անխուսափելի են վոկալ ցանկացած պրակտիկայում, այլ րվյալ դեպքում նաև բազմիցս դրսևորվող լայն ինտերվալային քայլերի միջոցով՝ ընդհուպ մինչև վարընթաց փոքրացրած դեցիմալները:

Մեր առաջարկն է՝ շեշտը դնել կատարման դեկլամացիոն կողմի վրա՝ ընդ որում պահպանելով հնչյունային բարձրությունների առավելագույն ճշգրտությունը և իջեցնելով հնչողության ուժգնությունը: Դա երգեցողությանը ողբերգական անխուսափելիության և կյանքից որոշակի իմաստով առանձնացած լինելու բնույթ կհաղորդի, քանի որ հերոսուհու հոգին գրեթե մահացած է: Այնաստիկ պարմում է պարերագմի ժամանակ՝ Վարդանանց կանանց խիզախությունների մասին, սակայն դա նրա հպարտությունը չէ, քանի որ ինքն է մարմնել ամուսնուն ու իր կողքին կանգնած բոլոր մարդկանց, ինչպես նաև դավաճանաբար մարմնել է հայ ժողովրդի ամբողջ պարմությանն ու ինքն իրեն:

Նադիրի ծաղրը այլևս չպետք է հուզի Այնաստիկին:

Այս խոսքերին Այնաստիկ պետք է արձագանքի ո՛չ այնպես, ինչպես նշված է պարտիտուրում՝ արելությանը և հիացմունքով, այլ՝ հանգիստ, կարծես պարմելով ձեռով, առանց հուզավառության և Շահին ուղղված արհամարհական հայացքով: Պետք է փոքր-ինչ պաթոս ավելանա թաթուլին հիշելու ժամանակ:

Օրինակում նվագախումբն ավելի խիտ է, սակայն այստեղ նույնպես հարկավոր է դինամիկան իջեցնել, դա վերաբերում է անգամ 555-էջի *crescendo*-ին: Վոկալ գծի արտահայտչականությունը պահպանելու համար պետք է, որ նվագախմբի լարվածությունը *mf* -ից ավելի բարձր չլինի: Այդ դեպքում փողային գործիքների պղնձյա կազմը կհնչի որպես հոգեհանգստյան սգո երաժշտություն:

Այնաստիկ վերջին ֆրագը նույնպես պետք է կատարվի մեռյալ, անգույն երանգով, առանց վիբրացիայի և ընդհարված բացականչությունների ձևով:

Սա մահացող հոգու վերջին պոռթկումն է, իսկ գործողությունն արդեն երկրորդական է:

«Այնաստիկ» օպերայի վերջին գործողության, ինչպես նաև ամբողջ օպերային ներկայացման մեջ, կատարման մեր առաջարկած փարբերակում Այնաստիկ կերպարի զարգացման հոգեբա-

նական էությունը շար ավելի ռեյտեֆային է, քան օպերայի ներկայիս բեմադրության մեջ: Մեր առաջարկած կատարողական փարբերակում գլխավոր հարկանիշը վերադարձն է դեպի դրամատիկական այն շեշտադրումները, որոնք բացահայտորեն բխում են օպերայի պարտիտուրի բնութագրից: Այս օպերայի գլխավոր գաղափարը հերոսուհու անհայտ ողբերգությունն է, և ոչ թե հայ ժողովրդի պայքարը պարսից բռնակալների դեմ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Тигранов Г.Г., Армянский музыкальный театр. Очерки и материалы., том I, Ер.: Армянское государственное издательство., 1956., 384-с.
2. Ա.Ա.Սպենդիարյան, Երկերի լիակատար ժողովածու, 11-րդ հատոր, գիրք 1-ին - Այնաստ, պարտիտուր, Եր., Սովետական գրող, 1984թ.:
3. Ա.Ա.Սպենդիարյան, Երկերի լիակատար ժողովածու, 11-րդ հատոր, գիրք 2-րդ - Այնաստ, պարտիտուր, Եր., Սովետական գրող, 1988թ.:

Резюме

Summary

В аналитической статье аспиранта ЕГК им.Комитаса Гургена Робертовича Бавеяна исследуются интонационные, эмоциональные и динамические характеристики главной героини оперы “Алмаст” Александра Спендиарова, которые в сценическом действии выявляют психодинамический образ.

Автор статьи предлагает советы исполнительского и интерпретационного плана. Поскольку борьба армянского народа против персидских завоевателей является образным рядом второго плана, а главная идея — это трагедия личности, то в предлагаемой исполнительской версии самым важным является возврат к тем драматургическим акцентам, которые выдвигаются в партитуре оперы.

ANALYTICAL ARTICLE:

Singer, YSC post graduate, soloist of Yerevan State Opera Theatre Gurgen Roberti Baveyan introduces the article "Peculiarities of forming analyses of roles of A.Spendaryan's "Almast" opera". The author writes about the technical performing peculiarities of the main roles "Almast". At the same time he analyses performing peculiarities of gousan's area.

The author suggests advices about performing and interpreting sphere.

**ВИЛЛИ ВАГАНОВИЧ
САРКИСЯН**

*Пианист,
заслуженный артист РА,
профессор ЕГК им.Комитаса*

Же так давно вышедшая в свет книга “Незабываемые имена. Очерки о пианистах–армянах” кандидата искусствоведения, профессора Ереванской государственной консерватории им.Комитаса Шушаник Арутюновны Апоян явилась значительным событием в мире армянского музыкального искусства. Читатель, знакомый с многочисленными предыдущими работами Ш.А.Апоян по истории армянской фортепианной музыки, и на этот раз получил целостную и обобщённую картину уже другой важнейшей области – исполнительской. В превосходном труде автор в новом исследовательском аспекте раскрывает перед нами историческую па-

фессор ЕГК им.Комитаса Светлана Корюновна Саркисян: “Авторитетный музыковед, глубокий знаток истории и теории фортепианного искусства, Ш.А.Апоян стояла у истоков формирования этой области в армянском музыкознании. Именно благодаря её многолетним исследованиям фортепианная культура Армении стала восприниматься как целостное и значимое явление” (З.С.З).

Сквозь хронологическое расположение очерков–портретов армянских музыкантов просматривается определённая их сгруппированность по географическим параметрам. К одной группе относятся как выходцы из крупных городов Закавказья, продолжившие своё дальнейшее образование в известных центрах музыкальной культуры Западной Европы и России, так и уроженцы зарубежных стран, получившие европейское образование и внесшие вклад в развитие общеевропейской музыкальной культуры. К другой группе принадлежат пианисты–армяне, деятельность которых протекала в городах России. И, наконец, третью группу представляют музыканты–армяне, возвратившиеся в родную Армению и посвятившие все свои силы делу становления армянской фортепианной культуры. Однако похоже, что автор различает армянских музыкантов

Же оценимый вклад

нораму фортепианной культуры Армении (с XIX до конца XX в.). Шестнадцать очерков книги представляют хронологически поэтапный процесс развития армянского фортепианного искусства.

